Ս) Ծախքի գումարները մեծ մասամբ չեն համապատասխանում նախահաշուի յօդուածներով որոշուած գումարներին. աւելի պարզ կացուցանելու համար այստեղ դնուած է մի աղիւսակ, որից կ'երևայ, թէ որքան պիտի լինէր նախահաշուով և իսկապէս որքան է եղած:

1893 թ. Դէֆիցիտը	1007 ր. 50 կ.	416 ր. 04 կ.
Ուսումնարանների	1020 » — »	1020 » — »
Ուսումնառուներին	1950 » — »	2125 » — »
Ուսուցչ. ցէնզի գործի համար .	3000 » — »	3458 » 51 »
Տառապեալներ	300 » — »	132 » — »
Պետական 5%	94 » — »	108 » 54 »
Դիւան, մատենադ. ընթերց. .	4170 » — »	3280 » 52 »
Ցատուկ գումարների ելքը . . .	470 » 45 »	303 » — »
5% անձեռմխելի ֆօնդի	276 » 50 »	276 » — »
Շուշու տեղ. վարչ. ուղարկելու .	54 » 75 »	54 » 75 »

Գումար—12343 ր. 20 կ. 11174 ր. 36 կ.

Այստեղից երևում է յօդուածների գումարների տարբերութիւն: Նախահաշուով որոշուած դէֆիցիտից 416 ր. 04 կ. ինչպէս Խորհրդի 1893 թ. գործունէութեան իսկական դէֆիցիտ հանգրուած է այս հաշուետարում և անցուցած ըստ պատշաճին անձեռմխելի գումարին—մնացած 54 ր. 46 կ. մնացած (1893 թ.) ուսուցչ. ցէնզի համար ծախսած գումարն է, որը անցուցուած է ներկայ հաշուետարու նոյն յօդուածի ծախսի հաշուին և ելք գրուած:

Բացի վերոյիշեալ յօդուածներից եղել են և այլ երկու ելքի յօդուածներ, այն է՝ կարօտեալներին օգնելու յօդուածով 6875 ր. 74 կ. և Բալասանի հաշուին 54 ր. 20 կ.: Վերջին ծախքն առաջացած է Բալասանում գոյութիւն ունեցող ընկերութեան ձիւղի փակման աւթիւ աջնտեղ գնալու և մնացած 840 ր. ձեռք բերելու համար:

Բ) Բոլոր ծախքերի վերաբերմամբ կազմուած են արձանագրութիւններ և ամեն մի ծախք վաւերացրած է համապատասխան վկայագրով, միայն արձանագրութիւն և ստացագիր չը կան մի աղքատ կնոջ տուած 5 ր. մասին և լոկ անդորրագրեր չկան ծախսուած հետեւեալ գումարների մասին:

1. Մարթայ Ղրղեանին ուսումնավճար տուած. 30 ր. — կ.
2. Բասենցի Քորոս աղային 30 » — »
3. Երկու աշակերտների Շուշի գնալու ծախք. 13 » — »
4. Մաշուրեան որբ աղջկան 10 » — »
5. Խաչատուր Տէր-Գէորգեանին 5 » — »
6. Մի ուսանողի տուած 15 » — »
7. Կարախանեանին տուած 2 ամսուայ թոշակ. 10 » — »

Ք. Թոշակաւոր աշակերտներից Անանեանը արհեստաւորաց ուսումնարանից դուրս եկած լինելով, շարունակել է երկու ամիս ընկերութիւնից թոշակ ստանալ 5-ական րուբլի. նոյնպէս թոշակաւոր աշակերտ Պետրոսեանը մի ամսուայ թոշակ 5 ր. աւելի է ստացել:

Այդ թոշակաւոր Անանեանը դեռ 1893 թ. ևս ուսումնարանից դուրս եկած չի ներկայ նոյն թուականում էլ մի քանի ամսուայ թոշակ աւելորդ ստացած է, չը նայելով, որ մենք դեռ այն տարուայ հաշիւները քննելիս ևս ակնարկած ենք այդ մասին, բայց դժբաղտաբար նոյնը շարունակուել է և այս հաշուետարում:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՅՔԻ ԿՈՂՄԱՆԷ:

Թէև վերաստ. յանձնաժողովի հրահանգում պարզ ասուած է, որ յանձնաժողովը պարտ է քննել և ստուգել, թէ Ընկերութեան շարժական և անշարժ կայքերը գրվում են արդեօք մատեաններում իրանց գների արձանագրութեամբ և թէ արդեօք անկորուստ մնում են բոլոր կայքերը, բայց յանձնաժողովս այդ պարտքն անկարող եղաւ կատարել, որովհետև ընկերութեան ունեցած կահկարասիքի վերաբերմամբ մատեան և ցուցակ չը կայ կազմուած, մինչդեռ այդպիսի մատեան կամ ցուցակ Խորհուրդը պարտաւոր էր ունենալ և պահել ըստ պարզ տրամադրութեան հրահանգի:

Ընդ սմին յանձնաժողովս հարկ է համարում նկատել.

Ա) Որ ընկերութեան գործերը (թղթերը) հիմնարկութեան օրից մինչև այժմ անփոյթ անկազմ մնում են և մեր կարծիքով ամեն մի գործ առանձին պիտի կազմուէր և այնպէս իննամքով պահուէր:

Բ) Որ Խորհուրդը առանց Ընդհ. ժողովի թույտուութեան ընկերութեան անձեռնմխելի և յատուկ գումարներ կազմող պարտատուների $\frac{0}{100}$ $\frac{0}{100}$ թղթերի գրաւականով բացած է յատուկ ընթացիկ հաշիւ և թէև այդ կրեդիտով չէ օգտուած և փող վերցրած սակայն նոյն այդ գործողութիւնը հակասում է այն յատուկ գումարների նշանակութեան և պահելու միջոցին:

Գ) Ընկերութեան ներկայ հաշուետարուայ դրամական գործառնութիւնից զուտ մնացորդ է մնացած 528 ր. 90 կ. որը Խորհուրդը իբրև մնացորդ դրամադրելի գումար ստացել է 1895 թ. դրամադրելի գումարների հաշուին. սակայն այդ գումարը ըստ խոստման և պարտաւորութեան Խորհրդին և ըստ որոշման Ընդհ. ժողովի, պիտի անցնէր խօլերայի պարտքի հանգուցման հաշուին:

Մենք կարծում ենք, որ խօլերայի հանգուցման հաշուին պիտի անցուցուէր նաև Բալասանի փակուած ձիւղից ստացուած 840 ր. հանելով դրա վերաբերեալ 54 ր. 20 կ. ծախքը, ուրեմն 785 ր. 80 կ.-ը որ չէ արուած:

Յ. Սրբփանէան

Ն. Տիգրանեան

16 սեպտ. 1895 թ.



ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴԸ

Իւր 1895 թ. սեպտ. 23-ին կայացած նիստում լսելով վերաստուգող յանձնաժողովի ներկայ զեկուցագիրը և քննելով, № 19 արձանագրութեամբ որոշեց:

Առաջարկել վերաստ. յանձնաժողովի զեկուցագիրը առաջիկայ Ընդհանուր ժողովի անօրէնութեան, բացատրելով:

I. Իսկապէս յանձնաժողովի ցոյց տուած թերութիւնները և նկատողութիւնները ամփոփուած են հետեւեալ 8 կէտերի մէջ:

1) Խորհուրդը իր ժամանակին չէ ստացել 5100 ռ. և 9000 ռ. գումարները բանկից, որով 60 ռ. չափ տոկոսիքի վնաս է կրել:

2) Խօլերաչի առթիւ անձեռնմխելի գումարից պարտք վերցրած, ինչպէս և Բաթումի և Կարսի ճիւղերին նոյն գումարից փոխ տուած գումարների որոշուած հանգուցումն տեղի չէ ունեցել:

3) 113 ռ. 36 կ. գումարի, որ տրուած է 8 անձանց՝ ստացագրեր չը կան, թէև արձանագրութեան մէջ յիշուած և գրուած են:

4) Թոշակաւոր Անանեանը 2 ամիս աւելի է ստացել 5-ական ռ. մինչ դպրոցում չէ եղել. իսկ Թոշակաւոր Պետրոսեանը 5 ռ. աւելի է ստացել որոշուած թոշակից դուրս:

5) Կահ կարասիքի համար առանձին մատեան չկայ.

6) Խորհրդի գործերը չեն կազմուած.

7) Խորհուրդը իրաւունք չունի բանալ բանկի հետ «յատուկ ընթացիկ հաշիւ» (Спеціальный текущий счет).

8) Խորհուրդը պարտաւոր էր տարուայ վերջին մնացորդ 528 ռ. 90 կ.-ը և Բալասանից ստացված 785 ռ. 80 կ. անցնել խօլերաչի առթիւ արած պարտքի հանգուցման հաշուին:

II. Այդ կէտերի դէմ Խորհուրդս տալիս է հետեւեալ բացատրութիւնները:

1) 5000 ռ. և 9000 ռ. մուրհակների ժամանակը լրացած լինելով չունիս ամսին, ամառուայ ընթացքում, երբ Խորհուրդը դադարեցնում է իւր նիստերը, դրանից առաջացել է չետաձգում և, արդարև ընկերութիւնը կրել է 60 ռ. վնաս:

2. Խօլերաչի պարտքը չէ հանգուցուել, որովհետև նախ 1894 թ. նախահաշուի մէջ այդ հանգուցման համար չը կայ որևէ գումար նշանակուած, երկրորդ՝ Խորհուրդը չայտնել էր թէ այդ պարտքը անհնարին է սովորական միջոցներով հանգցնել, այլ պէտք է սպասել արտակարգ եկամտներով կամ նուէրներով հանգցնել և Խորհրդի այս կարծիքին հաւանութիւն է տուել Ընդհանուր ժողովը, որոշելով թողնել Խորհրդին հնարաւոր միջոցներ ձեռք առնել այդ պարտքը հանգցնելու համար: Ինչ վերաբերում է Բաթումին և Կարսին, առաջինը չայտնել է որ չէ կարող ամբողջ 1000 ռ. տալ և ուղարկել է միայն 350 ռ., իսկ վերջինը արդէն վճարել է սոյն տարվայ սկզբում իր պարտքը 200 ռուբլի:

3) 8 անձանց տրված 113 ռ. 35 կ.-ի մասին Խորհուրդը արդէն կարգադրել է ձեռք բերել ստացականներ, մանաւանդ որ մի մասը տրուած է կրթական հաստատութիւնների միջոցով:

4) Խորհուրդս միջոցներ է ձեռք առել, որ այլ ևս չը կրկնուեն Անանեանի թոշակ ստանալու պէս դէպքեր, իսկ Պետրոսեանին տրուած աւելորդ 5 ռ. Խորհուրդս տուել է իբրև նպաստի նկատի ունենալով այդ աշակերտի ծայրայեղ չքաւորութիւնը:

5) Որովհետև կահ կարասիք Խորհուրդս սկսել է ձեռք բերել միայն 1894 թ. սեպտեմբեր ամսից, երբ բացուել է գրասենեակ և ընթերցարան, ուստի միջոց չէ ունեցել բացի

եղած ցուցակներինց, առանձին ինվէնտար ևս կազմել և այդ ինվէնտարը կը կազմուի ներկայ 1895 թ. ընթացքում:

6. Դեռ անցեալ տարի Խորհրդիս քարտուղարը յայտնել էր գործերը առանձին-առանձին դասակարգելու, կազմելու և ցուցակագրելու անհրաժեշտութիւնը, սկսեալ ընկերութեան բացման օրինց, որովհետև բացման օրինց մինչև 1894 թ. սեպտեմբեր ամիսը Խորհուրդը չունենալով առանձին դիւանատուն և գրասենեակ, անհնար էր եղել այդ անել, իսկ այժմ երբ բացուել է գրասենեակ, ամբողջ 14 տարուայ գործերը կարգաւորելու, դասակարգելու, բաժանելու առանձին-առանձին գործերի, ցուցակագրելու համար պահանջվում է երկար ժամանակ և աշխատանք: Խորհուրդս մտադիր է այդ պակասը լրացնել եկող 1896 թ. ամառուայ ընթացքում:

Յատուկ ընթացիկ հաշիւ բանկի հետ Խորհուրդը բացել է այն նպատակով, որ 1) արժէթղթերի պահպանութեան համար աւելորդ փող չը վճարէ, և դրանով խնայողութիւն է լինում տարեկան մօտ 20 րուբլի, 2) արտակարգ դէպքերում երբ հարկաւոր լինի որևէ գումար պարտք սնել, Խորհուրդը ձեռնամուկ չը լինի ընկերութեան արժէթղթերին, այլ միջոց ունենայ ձեռք բերել իբրև պարտք և ապա լրացնել. 3) վերջապէս, Խորհուրդը կարծում է, որ իրան է վերապահուած ընկերութեան գումարները բանկերում պահելու և շահեցնելու եղանակը:

8. Եթէ Բալխանից ստացուած 785 ր. գործադրուէր խօլերային պարտքի հանգուցման, այն ժամանակ Խորհուրդը տարուայ վերջին կունենար դէֆիցիտ և ոչ մնացորդ. իսկ Խորհուրդը պէտք է ծածկէր 416 ր. դէֆիցիտ, որ գոյացել էր դեռ 1893 թուինց:

Նախագահող՝ Ա. Մէլիք-Ապրեան

Քարտուղար՝ Հ. Առաքելեան

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ:

5 մարտի 1894 թ.

1889 թիւ մարտի 22-ին կայացաւ հետևեալ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրամանը. ԹԱԳԱՌՈՐ ԿԱՅՄՐԸ՝ քննելով ներքին Գործոց Նախարարի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ բարեհայեցողութեան ներկայացրած հայկական գործերի մասին խորհրդակցութեան օրագիրը, մարտի 22-ին ամենաողորմաձաքար բարեհաճեց հաւանութիւն տալ այդ օրագրում բացատրուած դատողութիւններին, այն է՝

II. «Հայ-Գրիգորեան եկեղեցական-ծխական ուսումնարանների մէջ ուսաց լեզուի, պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան ուսուցիչներ և վարժուհիներ պէտք է նշանակուեն այնպիսի անձինք, որոնք օրինաւոր ուսուցչական ցէնդ ունեն. բայց թոյլատրել Պատրիարքին ընդունել այդ դպրոցներում ուրիշ առարկաների դասատուութեան համար և այն անձանց, որոնք չունեն յիշեալ ուսուցչական ցէնդը, բայց միայն այն պայմանով, որ այդ բացառութիւնը տեղի ունենայ 5 տարվայ ընթացքում: Այդ ժամանակամիջոցից յետոյ, ցէնդ չունեցող անձանց, առհասարակ չը պէտք է այլ ևս թոյլատրուի դասատուութիւնը:»

Ուրեմն այդ ժամանակամիջոցը լրանում է ներկայ ամսի 22-ին: Թէ ինչու մեր Բարձրագոյն Հոգևոր իշխանութիւնը, աչքի առաջ ունենալով այդ հրամանը և 5 տարի ժամանակ,

չէ ձեռնարկել այդ պահանջի իրագործման և չէ հոգացել, որ հայ ուսուցիչները վաղորօք աշխատեն ցէնդ ձեռք բերել, այդ անհոգութեան պատճառները մեզ յայտնի չեն: Իրողութիւնն այն է, որ այսօր, երբ այդ օրէնքի գորութիւնը պէտք է գործադրվի, հայ ուսուցիչների և վարժուհիների մեծագոյն մասը արտաքսվելու վտանգին է ենթարկուած: Եթէ քննելու լինենք Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկու հրատարակած հաշիւը (1892 թ.) կը տեսնենք. որ մեր եկեղեցական-ծխական ուսումնարանների թիւը նշանակուած է 197, որոնք ունեցել են 74 կրօնուսուցչ, 329 ուսուցիչներ, և 135 վարժուհիներ: Մի կողմ թողնելով կրօնուսուցչներին, որոնց համար ցէնդ չէ պահանջվում, քանի որ կրօնուսուցչների ցէնդը իրանց եկեղեցական աստիճանն է, 464 ուսուցիչներից և վարժուհիներից միայն 132-ը ուսուցչական ցէնդ ունեն, ուրեմն միայն 30 0/0-ը: Եթէ 464 թիւը քիչ համարենք, յամենայն դէպս մեր ուսուցիչների և վարժուհիների թիւը 500-ից աւելի չէ, ուրեմն 500-ից միայն 150-ը ցէնդ ունեն. մնացած 350-ը անցէնդ են և այս մարտի 22-ից կամ առաջիկայ սեպտեմբերից կը զրկվեն ուսուցչութեան իրաւունքից և մեր դպրոցները կը մնան առանց ուսուցիչների:

Կով. Հ. Բարեզ. Ընկեր. Խորհրդի ուշադրութիւնից չէր կարող վրիպել այդպիսի մի կենսական խնդիր, ուստի նա դեռ անցեալ 1893 թ. սկզբին իր նախահաշուի մէջ մտցրեց 260 ր. մի գումար այդ գործի համար: Սակայն ստանալով հետզհետէ բազմաթիւ խնդրագիրներ ուսուցիչներից և տեսնելով որ այդպիսի մի չնչին գումարով անկարելի է որոշ նպատակի հասնել, Խորհուրդը լուրջ խորհրդակցութեան առարկայ դարցրեց այդ խնդիրը և 1893 թիւ մարտի 20-ին կայացած նիստում որոշեց հիմնական կերպով ձեռնարկել ուսուցչական ցէնդի գործի կազմակերպութեան: Իւր առաջին գործն եղաւ դիմել Ամենապատիւ Տեղապահ Սրբազան Երեմիա եպիսկոպոսին և ստանալ

Նորին Բարձր սրբազնութեան հաճութիւնը և հաւանութիւնը խնդրել, որ 1882-ին Քիֆիտում կայացած առաջին ընդհ. ուսուցչ. ժողովից մնացած գումարը—1500 ր. որ 0/0—դարձել է 2250 ր., գրուի Խորհրդի տրամադրութեան տակ այդ գործի համար: Տէր Տեղապահը ոչ միայն տուեց իւր բարձր հաճութիւնը և կարգադրեց որ գումարը յանձնուի Խորհրդին, այլ և ձօնեց իւր հաշրական օրհնութիւնը և յորդորեց կանգնել գործի գլուխը և կազմակերպել դասընթացները, իւր գրութեամբ որ 'ի 21 ապրիլ 1893 թ. № 44: Խրախուսուած այդ աջակցութեամբ, Խորհուրդը մի առանձին մասնաժողով ընտրեց, որին անդամներ նշանակեց պ. պ. Սզ. Քալանթարին, Յովհաննէս Սպենդիարեանին, Ս. Մալխասեանին և Հ. Առաքելեանին և այդ մասնաժողովին յանձնեց զբաղուել ուսուցչական ցէնդ ձեռք բերել ցանկացող ուսուցիչների խնդրով: Մասնաժողովի գործունէութեան հետեւանքն եղաւ ամառուայ ընթացքում Քիֆիտում փորձական դասընթացների կամ մասնաւոր կուրսերի կազմութիւնը: Այդ կուրսերը բացուեցան չունիսի 20-ին և փակուեցին օգոստոսի 27-ին և 37 հոգի պատրաստուեցին, թէ ուսուցիչներ և թէ վարժուհի: Պատրաստող ուսուցիչները 4 հոգի էին: Ենթահիւ այն հանգամանքի, որ Սորաշէնի և Չիգրաշէնի դպրոցների հոգաբարձութիւնները մասնաժողովի տրամադրութեան տակ դրին դպրոցական բնակարանները, կարելի եղաւ 37 հոգու պատրաստութեան վրա ծախսել 398 ր. 93 կ.-ինչպէս երևում է կուրսերի վերահսկող պ. Մալուսեանի մանրամասն տեղեկագրից— ուրեմն իւրաքանչիւր պատրաստողի վրայ ծախս եղաւ 10 ր. 80 կ.: Բացի այդ 37 հոգուց, 5 անձանց նպաստ տրուեց առանձին պատրաստուելու 170 ր., իսկ Ախալցխայում—տեղական վարչութեան կազմած կուրսերի վրայ ծախսուեց 320 ր. և այդտեղ իւրաքանչիւր պատրաստող նստեց 40 ր. որովհետեւ միայն 8 հոգի էին պատրաստվում: Ընդամենը ծախս եղել է անցեալ տարի

891 ր. 46 կ. և պատրաստուել են 50 հոգի, որոնք ցրուել են գաւառները պատեն առթով քննութիւն տալու։ Այդ փորձը հաստատ գրաւական էր, որ ձեռնարկած գործը կարող է յաջողութիւն գտնել և թէ պէտք է աւելի լայն հիմունքների վրա կազմակերպել այն։ Սակայն, որովհետև Տէր Տեղապահի կարգադրութիւնը գումարը յանձնելու մասին դեռ էր կատարուել ուսուցչական ժողովի կարգադրիչ յանձնաժողովի կողմից և այդ ժամանակ արդէն բազմել էր Հայրապետական Քահի վրա այժմեան Աեհափառ Հայրապետը, Խորհուրդը կարևոր դատեց զիմել իւր քարտուղարի միջոցաւ Նորին Աեհափառութեան և հայցել Հայրապետական օրհնութիւնը, թոյլտուութիւնը և հրահանգը այդպիսի մի կարևոր գործի համար։ Խորհրդի զիմումը Նորին Աեհափառութեան եղաւ 1893 թ. նոյեմբ. 29-ին։ Եւ ահա Հայրապետական կոնգրակովի պատասխանի Խորհրդի զիմումին, Նորին Աեհափառութիւնը իւր Հայրապետական օրհնութեան հետ միասին յորդորեց և արտօնեց Խորհուրդը անչապաղ ձեռնարկել ուսուցչական կուրսերի կազմակերպութեան, միևնոյն ժամանակ հրամայեց, որ 2250 ր. անմիջապէս յանձնուի Խորհրդին, որպիսի գումարն և ստացաւ Խորհուրդը ներկայ ամի յունուարի սկզբին։ Զօրացած Հայրապետական արտօնութեամբ և օրհնութեամբ, Խորհուրդը իւր 1893 թ. դեկտ. 14-ին և 18-ին կայացած նիստերում № № 32 և 33 արձանագրութեանց հիման վրա վերակազմեց ուսուցչական մասնաժողովը և նրա 4 անդամների թիւը աւելացրեց այլևս 3-ով, որոնք են թեմական տեսուչ Հ. Մեսրոպ Մելեան, Յովսէփ Մէլիք-Բէգլարեան և Խաչատուր Մարումեան և յանձնեց այդ մասնաժողովին կազմակերպել ուսուցչական ցէնդի գործը և մի անփոփ ծրագիր մշակել և այդ գործի համար Խորհուրդը յատկացրեց և մտցրեց իւր նախահաշուի մէջ 3000 ռուբլի, որն և ընդունուեց Աենդրոնական Ընդհանուր ժողովից անցեալ փետրուարի 20-ին։

Մասնաժողովը՝ նախ քան մի վերջնական ծրագիր մշակելը և ներկայացնելը, կարևոր համարեց զիմել բոլոր թեմական տեսուչներին վիճակագրական գնահատան տեղեկութիւններ ձեռք բերելու համար. առանց որոնց դժուար է յաջողեցնել գործը։ Վժբադտաբար մինչև այժմ միայն Քիֆլիսի թեմի թեմական տեսուչը արձագանք տուաւ մասնաժողովի հրահանգին և ցոյց տուաւ իւր պատրաստականութիւնը և աջակցութիւնը։ Իւր ունեցած 3 նիստերում, մասնաժողովը զժապրեց գործի կազմակերպութեան ծրագիրը, որ բացատրուած է 3 արձանագրութեանց մէջ։

Եւ այժմ, երբ մեզ հետ է Աեհափառ Հայրապետի օրհնութիւնը և հրամանը, երբ մեր առաջ է վերահաս վտանգը, երբ ոչ միայն Բարեգ. Ընկերութիւնը այլ և հասարակութեան բանիմաց մասը արդէն զգում է ներկայ գործի կարևորութիւնը և երբ վերջապէս, Հոգևոր իշխանութիւնը յանձինս սրբազան առաջնորդի պատրաստ է ամէն ջանք և աջակցութիւն չը խնայելու գործի աջողութեան համար, պէտք է այլ ևս չը յետաձգել գործը և յիշել, որ անհոգութիւնը այսուհետև յանցանք պիտի համարուի։

Քարտուղար՝ Հ. Առաքէլեան



չունիս—օգոստոս ամիսներում այդ երկու ուսումնարաններն ազատ են և կարող են պատասպարել պատրաստող ուսուցիչներին՝ հաւանութիւն տուեց և կարգադրեց, որ դասընթացի պարավունքները տեղի ունենան Յովնանեան դպրոցում, որտեղ այդ նպատակին կը յատկացուի երեք դասարան. պատրաստող վարժուհիները տեղաւորուին բնակութեան համար Գալիանեան դպրոցում, իսկ ուսուցիչները՝ Ներսիսեան դպրոցում:

3. Բնացուելիք դասընթացի մասին վաղորօք շրջաբերական կերպով հ. հ. թեմական տեսուչների միջոցով յայտարարել բոլոր ծխական դպրոցների ուսուցիչներին առաջարկելով, որ քննութեան պատրաստուել ցանկացողները մինչև մայիսի 1-ը դրաւոր կերպով հ. հ. թեմական տեսուչների միջոցով յայտենն իրանց ցանկութիւնը Բարեգ. Ընկ. Խորհրդին տալով նաև այն տեղեկութիւնները իրանց ուսման և զրութեան մասին, որոնք կը պահանջէ Խորհուրդը: Խորհրդի յայտարարութեան մէջ յայտնել ի միջի այլոց, որ չքաւորները Խորհրդի որոշմամբ, բացի ձրի ուսումից, բնակարանից և ծառայից՝ կ'ստանան նաև դրամական նպաստ երեք ամսուայ համար 20 ր. և աւելի եթէ ընկերութեան միջոցները ներեն, և այս՝ թէ Թիֆլիս հրաւիրուած ուսուցիչները զասընթացն ընդունուելիս կ'ենթարկուին քննութեան ուսաց լեզուից: Խորհրդի ցանկացած այս տեղեկութիւնները փութացնելու համար՝ դիմել նաև սրբազան վիճակաւոր առաջնորդներին և խնդրել նոցա աջակցութիւնը:

4. Երբ ուսուցիչների յայտարարութիւնները մինչև մայիսի 1-ը ստացուին այնուհետև իրաւահաստութեան մասնաժողովը կը քննէ նրանց և առանձին զրութեամբ Թիֆլիս կը հրաւիրէ արժանաւորներին, որոնց մասին հ. հ. թեմական տեսուչները, թէ վարք ու բարքի և թէ յաջողակութեան կողմից նպաստաւոր վկայութիւն կը տան և որոնք ուսած կը

լինեն պետական և ազգային միջնակարգ դպրոցներում, երաշխաւորութիւն կը համարուի թէ նոքա եռամսեայ դասընթացի ժամանակ յաջողութեամբ կը պատրաստուին պետական իրաւահաստութեան քննութեան: Հրաւիրուածները նախընթաց քըննութեամբ կը բաժանուին երկու զուգընթաց դասարանների, ՚ի նկատ առնելով նոցա պատրաստութեան աւելի կամ նուազ աստիճանը. — Եթէ հրաւիրուածների մէջ բաւականաչափ թուով վարժուհիներ լինեն՝ նոցա համար կազմել առանձին դասընթաց. իսկ եթէ սոցա թիւը նուազ լինի՝ սրանց էլ՝ զետեղել ուսուցիչների դասընթացներում:

5. Ժողովն արտօնեց իրաւահաստութեան մասնաժողովին քննարկել յարմար ուսուցիչներ ամառուայ դասընթացի պարավունքների համար և պայմանախօսել նոցա հետ և կայացրած որոշումն առաջարկել Խորհրդին ՚ի հաստատութիւն: Խորհուրդը յայտնեց նաև մասնաժողովին, որ ուսուցիչներ վարձելու խնդրում, նոյնպէս և յարմար պատրաստողներին թուի վեճարարութեամբ չը սահմանափակուի նախահաշուով որոշուած 3000 րուբլիով. որովհետև եթէ յարմարաւոր ցանկացողների թիւը ծրագրուած 80-ից աւելի լինի, երկուսի փոխանակ երեք զուգընթաց դասարանի պէտք է լինի կամ հրաւիրուելիք պատրաստող ուսուցիչներին աւելի մեծ դասազին տալ անհրաժեշտ լինի՝ Խորհուրդը միջոց կը գտնէ նախահաշուով որոշուած գումարից դուրս ծախսեր անել:

Ժողովն ՚ի նկատի ունենալով, որ մասնաժողովի այժմեան անդամներից ոմանք ամառուայ ընթացքում Թիֆլիսից կը հեռանան, որով դասընթացի գործը կարող է թույլ ընթանալ, յարմար համարեց մասնաժողովի թիւն երեքով աւելցնել և հասցնել տասնիւ ժողովը խնդրեց պ. պ. ֆ. Վարդանեանին, Կ. Կոստանեանին և բժ. Բ. Նաւասարդեանին՝ ստանձնել այս պաշտօնը: Պ. պ. ֆ. Վարդանեան և Կ. Կոստանեան հրաժարուեցան, յայտնելով, որ ամառն Թիֆլիզում լինելու չեն և բացի

այս պէտք ունեն ամառնային հանգստութեան: Իսկ պ. բժ-
 Բ. Նասասարգեանն ընդունեց մասնաժողովի անդամակից լի-
 նել: Պակասող երկու անդամները ժողովը որոշեց ընտրել Ներ-
 սիսեան դպրոցի ուսուցիչներին և խնդրեց պ. Կոստանեանին
 տեղեկանալ և յայտնել Խորհրդին, թէ որոնք ցանկութիւն և
 յարմարութիւն ունին այդ պաշտօնն ստանձնելու: Մասնաժո-
 ղովը, ժողովը յայտնած ցանկութեան համաձայն, կ'ընտրէ իւր
 անդամների միջից մէկին նախագահ, որ առանձին հսկողու-
 թիւն կ'ունենայ դասընթացի վրայ:

Ժողովը ՚ի նկատի առնելով, որ գուցէ քննութեան պատ-
 րաստել ցանկացողները թիւը շատ լինի, որոնց բոլորին
 դժուար կը լինի Թիֆլիսում բաւականութիւն տալ, միւս կող-
 մից գտնելով, որ հեռաւոր տեղերից Թիֆլիս գալ բաւական նե-
 ղութիւն և պրամական ծախս է պահանջում ուսուցիչներին,
 որոշեց երկու դասընթաց ևս բանալ, մէկը Երևանում, միւսը
 Ալեքսանդրապոլում, որոնք կը խնամուին Բարեգ. Ընկ. տեղա-
 կան ձեռնարկի միջոցներով և ղեկավարութեամբ: Նոյն նպա-
 տակով որոշեց դիմել Շուշու տեղական վարչութեան և առա-
 ջարկել նոյնպիսի դասընթաց բանալ՝ եթէ յարմարութիւն
 ունենայ:

Մշտական պատրաստողական դասընթաց հիմնելու առա-
 ջարկութիւնը ժողովը կարևոր և օգտակար գտաւ, և առա-
 ջարկեց մասնաժողովին՝ այդպիսի դասընթացի համար ծրա-
 դիր մշակել, ուսումնական և տնտեսական կողմից: Այս մշտական
 դասընթացի տնտեսական կողմն ապահովելու համար, բացի
 Բարեգործ. Ընկ. գրամական օգնութիւնից՝ որոշեց դիմել և
 ապրիլեան նպաստ խնդրել Ներսիսեան դպրոցից, Բագուայ Մար-
 դասիրական Ընկերութիւնից և եթէ հարկ լինի՝ բոլոր ունեւոր
 դպրոցներից, հոգևոր իշխանութեան միջոցով:

Նոյն նպատակի համար, ժողովը որոշեց Վրաստանի և
 Իմերէթի վիճակի սրբազան առաջնորդի միջոցով դիմել Վե-

հափառ Հայրապետին և խնդրել, որ Նորին Վեհափառութիւ-
 նը բարեհաճի առաջիկայ սեպտեմբերի 1-ից ձեմարանին և
 Ներսիսեան դպրոցին կից հիմնել առանձին մանկավարժական
 դասընթացներ, ներկայումս եղած դասարաններից դուրս և
 նոցանից անկախ:

Պատուոյ նախագահ, առաջնորդ վիճակին հայոց Վրաս-
 տանի և Իմերէթի, Գէորգ Էդ. Սուբէնեան

Նախագահ Բարեգ. Ընկ. Խորհրդի՝ Ա. Անտէան

- | | | | | |
|-------------|---|---|---|----------------------|
| Փոխ-նախագահ | » | » | » | Ա. Մանուշեան. |
| Անդամներ | » | » | » | Բ. Մէլիք-Ղարաբէօղեան |
| | | | | Ա. Մէլիք-Աղաբեան |
| | | | | Վ. Արծրունի |
| | | | | Ս. Սուլայեան |

Նախագահ Բարեգ. Ընկ. Ընդհ. ժողով.— Էժձձ. Բ. Նասասարգեան

- | | | |
|--------------------------------|---|--------------------|
| Պատուոյ հիւրեր | } | Փ. Վարդանէան |
| Անդամներ իրաւահաս. մասնաժողովի | | Յ. Մէլիք-Բէգլարեան |
| | | Զ. Ասաբէնեան |
| | | Ա. Քայանջեան |
| | | Խ. Մայրաթեան |

Արձանագրող և անդամ իրաւահաս. մասնաժ.— Սփ. Մայրաթեան



Այժմ աստիճանի միջոց զո լայնքով մ միտմտադրանք աստիճան
մ միտմտադրանքով լայնքով մ միտմտադրանք վնասմտադրանք զո
մ միտմտադրանքով մ միտմտադրանք լայնքով մ միտմտադրանք
մ սղոտր լայնքով մ միտմտադրանք լայնքով մ միտմտադրանք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴԻ

10 Յունիսի 1895 թ.

№ 14.

Խորհրդի պ. Բարտոլոմայի գեկուցումը Ընկերութեանս
ճիւղերի 1894 թ. հաշիւների մասին:

Մինչև այսօր բոլոր 19 տեղական վարչութիւններից,
որոնց մէջ հաշուած և Արդահանի վարչութիւնը և Արդուինի
մասնաժողովը, որոնք անցեալ 1894 թ. որևէ գործունէութիւն
չեն ունեցել և ժամանակաւորապէս դադարած են եղել,
ներկայացրել են իրանց հաշիւները միայն 11 տեղական վար-
չութիւններ հետեւեալ ժամանակագրական կարգով, այն է—

- 1. Թելաւի վարչ. սոյն ամի յունվ. 24-ին
- 2. Ախալցխայի » » » մարտի 4-ին
- 3. Շուշու » » » 10-ին
- 4. Ախալքալաքի » » » 28-ին
- 5. Արմաւրի » » » ապրիլ 6-ին
- 6. Դերբենդի » » » 16-ին
- 7. Ալէքսանդրապոլի » » » 29-ին
- 8. Նուխու » » » մայսի 8-ին

- 9. Նոր-Բայազէտի » » » » 8-ին
- 10. Վաղարշապատի » » » » 10-ին
- 11. Կարսի » » » » 23-ին

Մնացեալ վարչութիւնները, այն է Բաթումի, Երևանի,
Կաղզուանի, Հին-Նախիջևանի, Յիւնիվալի և Գորու մինչև այս-
օր չեն ներկայացրել իրանց հաշիւները: Սոյն յունիս ամսի
7-ին այդ զանցառու վարչութիւններին գրուել է շրջաբերա-
կան խտուր պահանջելով ներկայացնել շուտով հաշիւները:

Ձեկուցանելով այդ ամենը, քարտուղարը խնդրում է
քննել 1894 թ. հաշիւները կամ Խորհրդի մէջ ամբողջ կազ-
մութեամբ անդամների և կամ առանձին մասնաժողովի ձեռքով,
որպէսզի կարելի լինի պատրաստել այդ հաշիւներից ընդհա-
նուր տեղեկագիր և տպագրել:

Կ Ա Ր Գ Ա Գ Ր Ե Յ Ի Ն .

Կազմել մի մասնաժողով, բաղկացած պ. պ. Ս. Սուլխա-
նեանից, Փ. Վարդազարեանից և Հ. Առաքելեանից, որին և
յանձնել ընկերութեանս տեղական վարչութիւնների 1894 թ.
հաշիւները քննել և քննութեան արդիւնքը ներկայացնել Խոր-
հրդիս:

Նոյնպէս, Բաթումի Կաղզուանի, Հին-Նախիջևանի, Յիւնի-
վալի և Գորու ճիւղերի հաշիւները ստացածին պէս յանձնել
յանձնաժողովի քննութեան:

մի-8
 մի-01
 մի-88

ժողովարար-գործ . 8
 ժողովարար . 01
 ժողով . 11

ԱՌՊՏԿԱՌԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԱՍՏՈՒՄ:

Փրկիպոս Վարդապետանից, Ստեփան Սուլիսանեանից և Համբարձում Առաքելեանից:

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

Պատկառելի Խորհուրդդ իւր սոյն ամի յունիսի 10/15-ին կայացած նիստում, լսելով Խորհրդի քարտուղարի զեկօւցումը Ընկերութեանս 1894 թ. ընդհանուր հաշուի մասին № 14 արձանագրութեամբ որոշեց յանձնել երեքիս՝ Ընկերութեան բոլոր 19 ձիւղերի 1894 թ. հաշիւները քննելու և քննութեան արդիւնքը ներկայացնելու Խորհրդիդ յանդրազոյն անօրէնութիւն:

Միևնոյն ժամանակ յանձնեց քարտուղար Հ. Առաքելեանին կազմելու ընկերութեանս 1894 թ. ընդհանուր հաշուի պատկերացոյցը:

Կատարելով այդ յանձնարարութիւնը, պատիւ ունինք ներկայացնել Խորհրդիդ մեր քննութեան արդիւնքը:

Ա. Ընկերութեանս 19 ձիւղերից միայն 15-ն են ներկայացրել իրանց հաշիւները: Արդահանի ձիւղը և Բաթումի ձիւղի Արդուինի մասնաժողովը չեն ներկայացրել որևէ հաշիւ:

որովհետև չեն ունեցել որևէ գործունէութիւն 1894 թ. ընթացքում:

Բ. Հաշիւներ ներկայացնող տեղական վարչութիւնների վերաբերմամբ ահա մեր քննութեան եզրակացութիւնները.

1. Թելաւի տեղ. վարչութիւն.— Սա ունեցել է մուտք 805 ր. 61 կ. (նախահաշուով 675 ր. է սպասուելիս եղել), և ծախք 725 ր. 99 կ. (նախ. 675 ր.): Ուրեմն նախահաշուից դուրս աւելի ծախսել է 50 ր. 99 կ. որն պէտք է ընդունել, ՚ի նրկատի ունենալով վարչութեան տուած գոհացուցիչ բացատրութիւնը:

Նկատելի են հետևեալ շեղումները.
 1) 1893 թ. մնացորդ 28 ր. 19 կ. չէ մնացած 1894 թ. նախահաշուի մէջ, թէև ցոյց է տուած այդ 1894 թ. հաշուի մէջ:

2) Քատրոնական բեմից մուտք եղել է 145 ր., բայց ծախք—362 ր. 88 կ. և այդ գումարից 200 ր. տուած է հայոց գպրոցին իբրև վարձ բեմի, որովհետև դպրոցի շինութեան մէջ է կառուցուած բեմը:

II. Ախալցխայի տեղ. վարչ.— Սա իւր հաշուի մէջ թէև ցոյց է տուել մուտք 1280 ր. 52 կ., բայց ՚ի նկատի ունենալով, որ դրանից 1) 189 ր. 19 կ. մնացորդ է 1893 թ. 2) 300 ր. ուղարկուած է Խորհրդից իբրև յատուկ գումար ուսուցչական ցէնդի համար, ուրեմն մուտք եղել է 791 ր. 33 կ., որից 415 ր. անդամակցական վճար, իսկ անչայտ 376 ր. 33 կ.

Եթէ 415 ր. անդամակցական վճարի գումարից հանենք և 25 ր., որ ստացուած է իբրև անդամակցական վճար 1895 թ. կը տեսնենք որ մուտք է եղել իսկապէս 766 ր. 33 կ. (նախահաշուով 600 ր.) բացի դրանից ցոյց է տուած 352 ր. 57 կ. իբրև յատուկ գումար, առանց բացատրութեան թէ ինչ յատուկ գումար է: Մախք ցոյց է տուած 1143 ր. 67 կ.:

որից դուրս գալով 282 ր. 28 կ.-ը ուսուցչ. ցէնզի համար, և 87 ր. Խորհրդին վերադարձրած իբրև 1893 թուին ուղարկած 320 ր. մնացորդը, ծախք եղել է ուրեմն 774 ր. 39 կ. (նախահաշուով 600 ր.), ուրեմն նախահաշուից 174 ր. 39 կ. աւելի: Այս 774 րուբլուց 671 ր. 39 կ. ցոյց է տուած ծախսուած ընթերցարանի վրայ, 40 ր.—5% Ֆօնդի համար և 63 ր. ուսանողներին տուած:

Այստեղ պէտք է նկատենք, որ մենք գործ դրինք ամբողջ ժամեր այդ թուանշանները որոշելու և ճշտելու համար, որովհետև վարչութեան ներկայացրած հաշիւը այնքան անկանոն և խառն է, որ շատ դժուար է մի ամփոփ գաղափար կազմել և մեր ցոյց տուած թուանշանները այնուամենայնիւ չենք կարող ասել որ ճիշդ են ՚ի նկատի ունենալով գլխաւոր շէշումները անկանոնութիւնները:

1) 1893 թ. մնացորդ 189 ր. 19 կ. չէ մոցրած 1894 թ. նախահաշուի մէջ:

2) 1893 թ. Խորհրդի ուղարկած 320 ր., մնացորդ 87 ր. ցոյց չէ տուած 1894 թ. մուտքի մէջ, բայց հաշուած է ելքի մէջ իբրև ծախք, ուրեմն 87 ր. միանգամայն անկանոն է հաշուած իբրև ելք: Չէ կարելի հաշուել, որ 87 ր. մտնում է 189 ր. 19 կ. մնացորդի մէջ, որովհետև 87 ր. առանձին է ցոյց տուած 1893 թ. հաշուի մէջ:

3) 25 ր. իբրև 1895 թ. անդամակցական վճար անկանոն է մոցրուած 1894 թ. հաշուի մէջ:

4) 376 ր. 33 կ. ապլ և այլ վերնագրով տեսակի մուտքը չէ բացատրուած:

5) Նախահաշուով որոշուած $136 + 40 + 124 = 300$ ր. մուտքը ընթերցարանից և նրա նկուղից յայտնի չէ ստացուած է և մտնում է 376 ր. 33 կ. ապլ և այլ մուտքի մէջ թէ ոչ:

6) Յայտնի չէ ինչ տեսակ յատուկ գումար է 352 ր. 57 կ.-ը: Այդ գումարը չէ ցոյց տրուած ոչ 1893 թ. հաշուի և

ոչ 1894 թ. նախահաշուի մէջ. եթէ ենթադրել, որ նա ստացուած է 1894 թ. ընթացքում, այն ժամանակ նա պէտք է մտած լինէր 1895 թ. նախահաշուի մէջ, բայց այդտեղ էլ չկայ: Բացի դրանից հաշուին կից ընթերցարանի յատուկ հաշուի մէջ ցոյց է տուած 325 ր. մի գումար, իբրև յատուկ ընծայուած ընթերցարանին, արդեօք այդ 325 ր. մտնում է 352 ր. գումարի մէջ, թէ առանձին գումար է, յայտնի չէ: Յամենայն դէպս այդ յատուկ գումարները պէտք է ուղարկուեն Խորհրդին ՚ի պահեստ:

7) Փոխանակ 570 ր. ընթերցարանի վրայ ծախսուած է 671 ր. 39 կ. ուրեմն նախահաշուից դուրս 101 ր. 39 կ.

8) Խորհրդի ուղարկած ուս. ցէնզի 300 ր. գումարի մնացորդը 17 ր. 72 կ. չէ առանձնացրած, այլ մոցրած է տարուայ վերջի առ 1-ն յունվ. 1895 թ. մնացորդի մէջ, որ է 136 ր. 85 կ. մինչ պէտք էր ուղարկել Խորհրդին:

9) Առ 1-ն յունվ. 1895 թ. եղած 136 ր. 85 կ. մնացորդը չէ մոցրած 1895 թ. նախահաշուի մէջ:

10) Հաշիւը ըստ երեւոյթին չէ ենթարկուած տեղական վերաստուգող յանձնաժողովի քննութեան, որովհետև այդ քննութեան որևէ հետք չէ կրում:

11) Գրադարան-ընթերցարանի տեղեկագիրը, որ ներկայացուում է առաջին անգամ և պարունակում է 1892 թ. յունվ. 1-ից մինչև 1895 թ. յունվ. 1-ի շրջանի հաշիւը, նոյնպէս շատ չը բացատրուած կէտեր է պարունակում: Այդ հաշուից երևում է, որ ընթերցարանը ունի սեպհական շինութիւն, որն կառուցուած է քաղաքի ընծայուած գեանի վրայ և այդ շինութեան վրայ ծախսուել է 3000 ր.: Թէ ինչ տուած է մէկտններ կան, որոնք ապացուցանում են, թէ արդարև, այդ շինութիւնը պատկանում է Ընկերութեան, թէ ինչ եկամուտներից է հոգացուած այդ 3000 ր., որն չէ ցոյց տուած ոչ իբրև մուտք և ոչ իբրև ծախք բոլոր անցեալ տարիների

(1892—1895) նախահաշիւների և հաշիւների մէջ այդ մասին որևէ բացատրութիւն և տեղեկութիւն չը կայ:

12) Ընթերցարանի հաշուի մէջ ցոյց է տուած 1894 թ. մուտք 168 ռ. 23 կ. և ծախք 160 ռ. 51 կ. արդեօք գրանք մտնում են հաշուի մէջ թէ առանձին են նոյնպէս յայտնի չէ:

13) Յոյց է տուած նաև 325 ռ. իբրև յատուկ անձեռնմխելի գումար ընթերցարանի: Խորհրդի զօրծերից երևաց, որ վարչութիւնը ուղարկել է այս տարի Խորհրդին ՚ի պահեստ այս գումարից 275 ռ.:

Այս բոլոր անկանոնութիւնների և թերութիւնների պատճառով, յանձնաժողովս կարծում է, որ անկարելի է ընդունել իբրև վաւերական այդ հաշիւը և հաստատել:

III. Շուշու տեղ. վարչ. — Նախահաշուով մուտք պէտք է լինէր 1657 ռ. ծախք — նոյնչափ: Եղել է մուտք — 1360 ռ. 88 կ. (բացի Խորհրդից ստացած 300 ռ. ուսուցչ. ցէնզի համար): Այդ զանազանութիւնը առաջացել է նրանից, որ ներկայացումներից սպասուած 450 ռ. փոխարէն, ստացուել է միայն 77 ռ.: Ծախք եղել է 1491 ռ. 82 կ.: Առ 1-ն յունվ. 1895 թ. մնացորդ 169 ռ. 06 կ. (1660 ռ. 88 կ. — 1491 ռ. 82 կ.) չէ մտցրուած 1895 թ. նախահաշուի մէջ:

IV. Ախալքալաքի տեղ. վարչ. — Նախահաշուով 300 ռ. մուտքի տեղ ստացել է 411 ռ. 94 կ.: Բացի գրանից 1893 թ. ուրից մնացորդ եղել է 273 ռ. 55 կ., որից 200 ռ. յատուկ գումար ապագայ արհեստանոցի համար, ուրեմն մուտք ընդամենը 685 ռ. 49 կ., գրանից դուրս գալով 211 ռ. 38 կ. ծախքը — առ 1-ն յունվ. 1895 թ. մնացորդ եղել է 474 ռ. 11 կ.: Այդ գումարից 450 ռ. առանձնացնելով իբրև յատուկ գումար արհեստանոցի (200 ռ. 1893 թ. և 250 ռ. էլ նոր յատկացրած), մնացել է 24 ռ. 11 կ.: Բայց թէ այդ 450 ռ. յատուկ գումարը և թէ 24 ռ. 11 կ. հասարակ մնացորդը

դրանից յանձնաժողովս զայն ցոյց ցոյց անելով չէ մտցրուած 1895 թ. նախահաշուի մէջ, և ոչ ևս ուղարկուած Խորհրդին:

չեն մտցրուած 1895 թ. նախահաշուի մէջ, և ոչ ևս ուղարկուած Խորհրդին:

V. Արմաւրի տեղ. վարչ. — 1893 թ. մնացորդ 4556 ռ. 50 կ. -ից բացի մուտք եղել է 2445 ռ. 25 կ., ընդամենը 7001 ռ. 75 կ. (նախահաշուով 5655 ռ.): Ծախք եղել է 5269 ռ., որից 5000 ռ. հայոց ծխական երկսեռ դպրոցների շինութեան համար (նախահաշուով ծախս 5450 ռ.) մնացորդ առ 1-ն յունվ. 1895 թ. 1732 ռ. 75 կ., որից սակայն պէտք է դուրս գալ 290 ռ. 50 կ., որ պէտք է ստանայ Խորհուրդը իբրև 1893 թ. և 94 թ. եկամուտի 50/0-Ֆօնդի համար, ուրեմն մնացորդն է 1442 ռ. 25 կ.: Այս մնացորդի փոխարէն չը գիտենք ինչ պատճառով 1895 թ. նախահաշուի մէջ մտցրած է իբրև մնացորդ 1894 թ. 5500.:

VI. Դերբենդի տեղ. վարչ. — Մուտք ունեցել է 140 ռ. (նախ. 200 ռ.), ծախք — 140 ռ.: Ըստ երևույթին, վերաստ. յանձնաժողովը չէ քննել, այլ միայն տեղակ. ընդհ. ժողովը:

VII. Ալէքսանդրապոլի տեղ. վարչ. — Նախահաշուով մուտք պէտք է լինէր 836 ռ. 50 կ., որից 636 ռ. 50 կ., մնացորդ 1893 թ., ուրեմն միայն 200 ռ., իսկ ծախք — 836 ռ. 50 կ.: Սակայն 1894 թ. ընթացքում մուտք եղել է ընդամենը 6731 ռ. 39 կ., իսկ ծախք — 6179 ռ. 13 կ.: Այս հանգամանքը բացատրուում է նրանով, որ անցեալ տարի տիրող սովի և Թիւրքացից եկած զաղթականների պատճառով Ալէքսանդրապոլի վարչութիւնը մեծ գործունէութիւն է ունեցել և ստացել է զանազան տեղերից դրամ, ցորեն, ալիւր-բաժանելու սովեալներին, և բացել ձրի ճաշարան: 6731 ռ. 39 կ. գումարի մէջ մտնում է և Խորհրդից ստացած 300 ռ. ուսուցչ.

չական ցէնզի համար 1894 թ. լինելով բացառիկ տարի, հաշիւն ևս բացառիկ է: Յատկապէս սովեալների և գաղթականների համար վարչութիւնը ստացել է թէ կանխիկ դրամով, թէ նիւթով և թէ իբրև ներկայ սցումների արդիւնք, ընդամենը—5274 ռ. 85 կ., ուսուցչական ցէնզի համար 300 ռ. Խորհրդից, ուրեմն մուտք հասարակ—1156 ռ. 54 կ., որից 760 ռ. 86 կ. մնացորդ 1893 թ., իսկապէս հասարակ մուտք տարուայ ընթացքում 395 ռ. 68 կ.:

Մախք եղել է—1) Սովեալների, գաղթականների և ձրի ճաշարանի վրայ 5850 ռ. 11 կ. ուսուցչ. ցէնզի համար 163 ռ. և 166 ռ. 02 կ. սովորական ծախք, ընդամենը 6179 ռ. 13 կ. մնացորդ առ 1-ն յունվ. 1895 թ.—552 ռ. 26 կ., որից եթէ դուրս գանք 137 ռ. ուսուցչ. ցէնզի գումարի մնացորդը և 20 ռ. իբրև 39 ռ. հասարակ մուտքի 5⁰/₀-ն Փօնդի համար, որ վարչութիւնը չէ ուղարկել (137+20=157), բուն մնացորդը կը լինի 395 ռ. 26 կ.: Սակայն որովհետև նախահաշուով պէտք է յատկացնուէր ապագայ ընթերցարանին 591 ռ. 50 կ. ուստի (591 ռ. 50 կ.—395 ռ. 26 կ.)=196 ռ. 24 կ. լինում է դէֆիցիտ: Ուրեմն վարչութիւնը պարտք ունի ընթերցարանի յատուկ գումարին 196 ռ. 24 կ. այդ հաշուով ՚ի նպաստ սովեալների մուտք և ծախք եղել է ուրեմն 5850 ռ. 11 կ.:

VIII. Նուխու տեղ. վարչ.—Նախահաշուով որոշուած 962 ռ. 23 կ.—տեղ ունեցել է մուտք 2320 ռ. 53 կ., որից 1087 ռ. 23 կ. մնացորդ 1893 թ. (407 ռ. 23 կ.+680 ռ.), ուրեմն մուտք 1233 ռ. 30 կ.: Մախք եղել է 2027 ռ. 01 կ. (նախ 962 ռ. 23 կ.): Նախահաշուից աւել արած ծախք բացատրուած է նրանով, որ ընթերցարանի համար յատուկ նուէրներ են եղել: Այդ ընդհանուր 2320 ռ. 53 կ. մուտքից—992 ռ. 8 կ. ընթերցարանի վերաբերեալ յատուկ մուտք է, բացի դրանից նախահաշուով յատկացրուած է եղել 350 ռ.,

ուրեմն ընթերցարանը ստացել է 1342 ռ. 08 կ.: Մախք ընդհանուր եղել է 2027 ռ. 01 կ., որից ընթերցարանի վրայ 1342 ռ. 08 կ., մնացեալը 684 ռ. 93 կ. սովորական ծախքեր և առ 1-ն յունվ. 1895 թ. մնացորդն 293 ռ. 52 կ., մտցրած է 1895 թ. նախահաշուի մէջ: Բացի դրանից վարչութիւնն ունի ապագայ ապաստարանի համար նախորդ տարիներից յատկացրած 156 ռ. 51 կ. և 1894 թ. ընթացքում յատկացրած 50 ռ. ուրեմն ընդամենը 206 ռ. 51 կ., որն չէ մտցրուած 1895 թ. նախահաշուի մէջ և պէտք է ուղարկուի կենդրոնը ՚ի պահեստ:

Այստեղ պէտք է նկատենք, որ 1893 թ. հաշուի մէջ ընթերցարանի յատուկ գումար ց1-ն յունվ. 1894 թ. ցոյց է տուած 876 ռ. 90 կ. մինչ, 1894 թ. հաշուի մէջ այդ յատուկ գումարն ցոյց է տուած միայն 680 ռ. այս հարկաւոր է բացատրել:

IX. Նոր-Բայազէղի տեղ. վարչ.—Սովորական մուտք. 175 ռ. (նախ 170) արտակարգ յօգուտ սովեալների և գաղթականների 3995 ռ. 72 կ., ընդամենը 4170 ռ. 72 կ.: Մախք—սովորական—139 ռ. արտակարգ (3865 ռ.+158 ռ. 54 կ.)=4023 ռ. 54 կ., ընդամենը—4162 ռ. 62 կ.: Հաշիւն կազմուած է մանրամասն և կանոնաւոր: Մնացորդ 8 ռ. 10 կ. մտցրած է 1895 թ. նախահաշուի մէջ, իբրև պատահական մուտք:

X. Վաղարշապատի տեղ. վարչ.—Մուտք ունեցել է 600 ռ. 18 կ. (նախ. 690 ռ.), որից 305 ռ. 83 մնացորդ 1893 թ. և պարտք—50 ռ.: Մախք—133 ռ. 41 կ. և յատկացրած ապագայ ընթերցարանին և շերամապահական կայարանին 400 ռ. մնացորդ առ 1-ն յունվ. 1895 թ. 66 ռ. 77 կ.: 400 ռ. յատուկ գումարը մտցրած է 1895 թ. նախահաշուի մէջ, բայց 66 ռ. 77 կ.-ը ոչ. այս վերջին գումարից պէտք է պահանջել 12 ռ. 50 կ. իբրև 1894 թ. եկա-

մտի 50/0-ը Ֆոնդի համար, որն վարչութիւնը չէ նշանակել հաշուի մէջ և ոչ ևս ուղարկել: Կը մնայ մնացորդ 54 ռ. 27 կ. որից հանելով պարտք առած 50 ռ. կը մնայ 4 ռ. 27 կ.:

XI. Կարսի տեղ. վարչ. — Մուտք ունեցել է 12148 ռ. 40 կ., որից 3476 ռ. 20 կ. սովորական, իսկ 8672 ռ. 20 կ. արտակարգ ՚ի նպաստ սովեալների և գաղթականների: Այդ 3476 ռ. 20 կ.-ից մի մասն, այն է 1231 ռ. 65 կ. մնացորդ է 1893 թ, իբրև յատուկ գումար ընթերցարանի, 1000 ռ. ցոյց է տուած իբրև 10 տոկոսաբեր տոմսերի արժէքը, բայց թէ ինչ տոմսեր են դրանք, որտեղից են ստացուել, կամ ինչ գումարով գնուել, մնում է անյայտ և չէ բացատրուած, մնացած 1244 ռ. 55 կ. սովորական մուտքեր են:

Ծախք եղել է—1) սովորական ըստ նախահաշուի—973 ռ. 21 կոպ.: 2) Սովեալների և գաղթականների համար 5343 ռ. 11 կ. (որից 200 ռ. ուղարկուած է Կաղզուանի վարչ.) ուրեմն (973 ռ. 21 կ.+5343 ռ. 11 կ.)=6316 ռ. 32 կ., մնացորդ առ 1-ն յունվ 1895 թ. ցոյց է տուած 5832 ռ. 08 կ. որից 1) 1038 ռ. 03 կ. իբրև վերոյիշեալ 10 տոկոսաբեր տոմսերի արժէքը. 2) 3329 ռ. 09 կ. մնացորդ սովեալների գումարից. 3) 1231 ռ. 65 կ. ընթերցարանի յատուկ գումար. 4) 166 ռ. 43 կ. նորից աւելացրած այդ գումարի վրայ ըստ նախահաշուի և իբրև տոկոսիք յատուկ գումարի և 5) հասարակ մնացորդ 66 ռ. 88 կ. որի համար վարչութիւնը միջնորդում է նոյնպէս աւելացնել ընթերցարանի գումարի վրայ, այնպէս որ ընթերցարանական յատուկ գումարն դառնում է առ 1-ն յունվ. 1895 թ. 1464 ռ. 96 կ.:

Այս մնացորդ յատուկ գումարը 1464 ռ. 96 կ. չէ մըտցրած 1895 թ. նախահաշուի մէջ, նոյնպէս չէ մոցրած և 10 տոկոսաբեր տոմսերը ՚ի գին 1038 ռ. 03 կ. գումարի, որի ինչ լինելը պէտք է պարզել, և որն պէտք է ուղարկել կենդրոնին համաձայն կանոնագր. § 49-րդին: Գալով սովեալ-

ների 3329 ռ. 09 կ. գումարին, նրա համար վարչութիւնը ներկայացրել է առանձին յաւելուածական նախահաշիւ:

XII. Երեւանի տեղ. վարչ. — Սրա հաշիւը ստացուած է 1895 թ. յունիսի 21-ին, բայց կազմուած է շատ պարզ կանոնաւոր և մանրամասն, նրան կցուած է տեղակ. վերաստ. յանձ. խիստ մանրամասն զեկուցումը: Մուտք եղել է 1) սովորական—3232 ռ. 83 կ. սրա մէջ և տոկոսիք—216 ռ. (նախ. 3534 ռ.), որից 1598 ռ. 13 կ. մնացորդ 1893 թ. իբրև յատուկ գումարներ ընթերցարանի—1198 ռ. 13 կ. և Ալիքուշակի դպրոցի 400 ռ.) և 2) արտակարգ ՚ի նպաստ սովեալների և գաղթականների—6227 ռ. 88 կ. ընդամենը—9460 ռ. 71 կ.:

Ծախք եղել է—1) սովորական 1418 ռ. 70 կ. և 2) արտակարգ—սովեալներին և կարօտեալներին տուած—4822 ռ. 45 կ., այնպէս որ առ 1-ն յունվ. 1895 թ. մնացորդ եղել է 3219 ռ. 16 կ., որից 1405 ռ. 43 կ. սովեալների, իսկ 1814 ռ. 13 կ. (1528 ռ. 13 կ.+216 ռ.) ընթերցարանի և Ալիքուշակի յատուկ գումարներ: Այդ մնացորդներն մոցրած են 1895 թ. նախահաշուի մէջ:

XIII. Բաթումի տեղ. վարչ. — Մուտք ունեցել է 1893 թ. մնացորդ 288 ռ. 87 կ. (որից 251 ռ. 52 կ.-ը յատուկ գումար ապագայ ընթերցարանի) հետ միասին 1122 ռ. 84 կ. (նախ.—3643 ռ.): Ծախք—878 ռ. 95 կ. մնացորդ առ 1-ն յունվ. 1895 թ.—243 ռ. 89 կ., որն չէ մոցրուած 1895 թ. նախահաշուի մէջ և պէտք է իբրև յատուկ գումար ընթերցարանի ուղարկուէր Խորհրդին ՚ի պահեստ, բայց վարչութիւնը Խորհրդի թոյլաւութեամբ այդ գումարը գործ է դրել իր պարտքերի հանգուցման վրայ: Խորհրդին պարտ 1000 ռ. վճարն ևս չէ կարողացել հատուցանել:

XIV. Կաղզուանի տեղ. վարչ. — Սրա հաշիւն ստացուել է միայն յունիսի 27-ին: 1893 թ. մնացորդ —88 ռ. 57 կ.-ի

հետ միասին մուտք ունեցել է 1) սովորական — 398 ր. 66 կ. (նախ. — 445 ր. 81 կ.), 2) արտակարգ — սովեալների և գաղթականների օգտին — 2201 ր. 90 կ., ընդամենը 2600 ր. 56 կ.: Մախք եղել է — 1) սովորական — 281 ր. 51 կ. 2) արտակարգ — սովեալների համար — 2123 ր. 89 կ. ընդամենը 2405 ր. 40 կ., մնացորդ առ 1-ն յուսով. 1895 թ. 195 ր. 16 կ.: Սրանից պէտք է դուրս գալ և պահանջել 14 ր., իբրև եկամտի 5% — Փօնդի համար, իսկ 181 ր. 16 կ. համարել մնացորդ, որն սակայն չէ մոցրած 1895 թ. նախահաշուի մէջ:

XV. Գօրու տնդ. վարչ. — Սա ներկայացրել է իւր հաշիւը միայն յուլիսի 3-ին: Հաշիւը պարզ և կանոնաւոր չէ կազմուած: 1893 թ. մնացորդ 282 ր. 56 կ.-ից բացի ունեցել է մուտք 325 ր. 07 կ., ուրեմն ընդամենը 607 ր. 63 կ. (նախահաշուով 640 ր. 96 կ.): Մախք ցոյց է տուած 376 ր. 09 կ., այնպէս որ առ 1-ն յուսով. 1895 թ. մնացորդ պէտք է լինի 231 ր. 54 կ.: Բայց 1895 թ. նախահաշուի մէջ, որ կազմուած է 1895 թ. փետրվ. 18-ին այդ մնացորդը ցոյց է տուած 287 ր. 93 կ.:

XVI. XVII. Հ. Նախիջեւանի. եւ Յիւնիվալի ճիւղերը դեռ չեն ներկայացրել իրանց հաշիւներն իսկ —

XVIII. XIX. Արդահանի ճիւղը և Արդուինի մասնաժողովը 1894 թ. ընթացքում չեն գործել:

Ներկայացնելով պատկառելի Խորհրդիդ մեր քննութեան արդիւնքը, ՚ի պարտու պատշաճ տնօրէնութիւն, հարկաւոր ենք համարում յայտնել, որ մեր կարծիքով, շատ անկարգութիւններ թիւրիմացութիւններ առաջ են գալիս նրանից, որ չը կայ մշակուած մի ընդհանուր ձև հաշիւների և նախահաշիւների համար: Որոշելով մի ընդհանուր ձև, զբանով թէ տեղական վարչութիւնները և թէ Խորհրդի գործը շատ թեթեւացած կը լինէր: Այդ ձևը մշակելով, պատիւ ունինք ընդ սմին առաջարկել Խորհրդիդ քննութեան: Այդ ձևը կարելի էր

տպագրել և ուղարկել բոլոր վարչութիւններին ՚ի գործադրութիւն:

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկեր. Խորհուրդը իւր 1895 թ. սեպտ. 17-ին կայացած նիստում լսելով ներկայ գեկուցագիրը եւ քննելով, № 18, արձանագրութեամբ որոշեց.

1) Ախալցխացի, Արմաւրի, Նուխու, Կարսի և Գօրու վարչութիւններից բացատրութիւն պահանջել և խնդրել լուսաբանել քննիչ մասնաժողովի ցոյց տուած թերութիւնները և մոլթ կէտերը:

2) Պահանջուած բացատրութիւնները ստանալուց յետոյ, ներկայ գեկուցագիրը, ինչպէս և Ընկերութեանս 1894 թուի հաշուեցոյց պատկերը, ենթարկել Ընդհանուր ժողովի բարեհայեցողութեան և տնօրէնութեան չիշեալ վարչութիւնների տուած բացատրութիւնների հետ միասին:

3) Պահանջել այն վարչութիւններից, որոնք մինչև այսօր չեն ուղարկել Փօնդի համար 1894 թ. եկամտի 5% -ը, անյապաղ հասցնել Խորհրդիս:

4) Պահանջել Ախալցխացի վարչութիւնից ուղարկել ուս. ցէնդի գումարի մնացորդ 17 ր. 72 կ.-ը —

5) Պահանջել այն վարչութիւններից, որոնք որևէ չափով գումարներ ունեն, ուղարկել այդ գումարները Խորհրդիս ՚ի պահեստ:

Քննիչ մասնաժողովի մշակած ձևը ճիւղերի հաշիւներին և նախահաշիւների համար, իբրև նպատակաշարմար, ընդունել և տպագրել տարով ուղարկել բոլոր տեղական վարչութիւններին ՚ի հրահանգ և ՚ի գործադրութիւն:

Նախագահող՝ Ա. Մէլիք-Աղաբէտի

Քարտուղար՝ Հ. Առաքելեան

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կենդրոնական Մատենադարան-Ընթերցարանի:

1) Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կենդրոնական-Մատենադարան-ընթերցարանը, որ գտնուում է Թիֆլիսում բաղկացած է երկու մասից՝ հիմնական և շարժական:

2) Մատենադարան-ընթերցարանի հիմնական մասը բովանդակում է իր մէջ. ա) ամեն տեսակ հայերէն հին և նոր տպագրութիւններ. բ) հայագիտութեան, կովկասագիտութեան և առհասարակ արևելագիտութեան նպաստող հրատարակութիւններ՝ թէ ուսերէն և թէ այլ լեզուներով. գ) ընդհանրապէս գիտութեան ամեն ճիւղերի վերաբերեալ ընտիր երկեր. դ) բառարաններ, օրէնսգրքեր, ալբոմներ, քարտէզներ, պատկերներ, զբոսընթացներ և այլն և ե) ձեռագիրներ և զրաւոր չիշատակարաններ:

Մանօթ. ա) այս մասում գտնուում է հին դրամների ու կնիքների ժողովածուն: բ) Պարտաւորիչ չէ ունենալ մատենադարան-ընթերցարանում հայերէն այն գրքերը որոնք անփոփոխ արտասույութիւն են նախընթաց տպագրութիւնների:

Մանօթ. Իբրև բացառութիւն մատենադարան-ընթեր-

ցարանի այս մասից կարող են հրատարակութիւններ և իրեր ուղարկուել գիտնական հաստատութիւններին՝ նըրանց գրաւոր խնդրի համաձայն, ընկերութեան Խորհրդի բարեհայեցողութեամբ:

3) Մատենադարան-ընթերցարանի հիմնական մասից որևէ գիրք կամ չիշատակարան և կամ հրատարակութիւն դուրս տալը արգելուած է:

4) Մատենադարան-ընթերցարանի շարժական մասը բովանդակում է իր մէջ. ա) մանկական գրքեր. բ) մանկավարժական հրատարակութիւններ. գ) աշխարհաբար և գրաբար գրքեր. դ) դասական գրականութեան ընտիր երկեր՝ ուսերէն և այլ լեզուներով. ե) առհասարակ հանրակրթական գրքեր և զ) օժանդակիչ հրատարակութիւններ (բառարաններ, օրացոյցներ, կանոնագրութիւններ, զբոսընթացներ, օրէնսգրքեր, քարտէզներ և այլն):

5) Շարժական մասից գրքեր (բացառութեամբ օժանդակիչ հրատարակութիւնների) դուրս տանելու պայմաններն վճարելիք տուրքը սահմանում է ընկերութեան Խորհուրդը առանձին հրահանգով, ինչպէս և մատենադարան-ընթերցարանի թէ հիմնական և թէ շարժական մասերում պարապելու պայմանները:

6) Մատենադարան-ընթերցարանը գտնուում է Խորհրդի կառավարութեան, հսկողութեան և պատասխանատուութեան ներքոյ:

7) Մատենադարան-ընթերցարանի անմիջական կառավարութիւնը Խորհուրդը յանձնում է իր անդամների կամ ընկերութեան անդամների մէկին՝ ըստ իր հայեցողութեան, որին եթէ հարկաւոր համարի, կարող է և ոտձիկ նշանակել:

8) Կառավարիչն է վարձում և արձակում մատենադարան-ընթերցարանի սպասաւորներին:

9) Մատենադարան-ընթերցարանը ունի և զրապահ, ո-

րին ընտրում է և արձակում Խորհուրդը, կանխապես լսելով կառավարչի կարծիքը:

10) Ընդհանուր ժողովը ընտրում է մի յանձնաժողով, մատենադարան-ընթերցարանի համար գնուելիք հրատարակութիւնները, գրաւոր չիշատակարանները, և իրերը՝ գիտնական և հնագիտական՝ որոշելու համար (տես § 2): Յանձնաժողովը կանխօրէն առաջարկում է իր որոշումները Խորհրդի վաւերացման:

11) Մատենադարան-ընթերցարանի յանձնաժողովը ընտրւում է մի տարի ժամանակով և բաղկանում է 7 հոգուց, որոնցից հնգին ընտրւում է ընկերութեան Ընդհանուր ժողովը: Խորհրդի կողմից մատենադարան-ընթերցարանի պատասխանատու անձը և մատենադարան-ընթերցարանի կառավարիչը՝ ի պաշտօնէ համարւում են յանձնաժողովի անդամ:

12) Յանձնաժողովի նիստեր հրաւիրում է պատասխանատու անձը, առնուազն երկու ամիսը մի անգամ:

Յանձնաժողովի նիստերին նախագահում է մատենադարան-ընթերցարանի համար պատասխանատու անձը:

Պատասխանատու անձի բացակայութեան դէպքում յանձնաժողովի նիստ է հրաւիրում և նիստին նախագահում է կառավարիչը:

13) Մատենադարան-ընթերցարանի կառավարութեան ներքին շնորհաբերը, բացուելու և փակուելու ժամերը, ընթերցողների և գրապահի համար որոշ պարտաւորիչ հրահանգներ և կանոններ սահմանելը, ըստ ամենայնի պատկանում է Խորհրդին:

14) Խորհուրդը ներկայացնում է ընկերութեան Ընդհանուր ժողովին իւրաքանչիւր տարի իր ընդհանուր նախահաշուի և հաշուի հետ՝ ա) մատենադարան-ընթերցարանի տարեկան տեղեկագիրը. բ) մատենադարան-ընթերցարանի նախա-

հաշիւը և գ) մատենադարան-ընթերցարանի կանոնադրութեան վերաբերեալ փոփոխութիւնները:

15) Խորհուրդը մատենադարան-ընթերցարանի վերաբերեալ խնդիրներն վճռում է կառավարչի կարծիքը լսելուց յետոյ:

16) Խորհուրդը ապահովում է մատենադարան-ընթերցարանը հրդէհից:

17) Խորհուրդը որոշում է, թէ յանձնաժողովը տարուայ ընթացքում ինչ գումարի գիրք կարող է գնել իր հայեցողութեամբ:

18) Խորհուրդը տնօրինում է տարուայ ընթացքում, երբ և կամենայ գնել և ստուգել մատենադարան-ընթերցարանի վիճակը:

19) Պրապահի պարտաւորութիւններն են. ա) գրքեր ալ ընթերցողներին և յետ ստանալ նրանցից. բ) կազմել գրացուցակներ. գ) արձանագրել վիճակագրական տեղեկութիւններ՝ Խորհրդի սահմանած ձևերի համեմատ. դ) կազմել տալ թուահամարել և դրոշմել մատենադարան-ընթերցարանի բոլոր գրքերը, ձեռագիրները, չիշատակարանները, պատկերները և այլ՝ Խորհրդի սահմանած կարգով. ե) հսկել մատենադարան-ընթերցարանի մաքրութեան և ներքին բարեկարգութեան:

20) Մատենադարան-ընթերցարանը պարտաւոր է ունենալ ա) մայր ցուցակ (ինվէնտար). բ) սխտեմատիքական գրացուցակ. գ) հեղինակների գրքերի այբբենական ցուցակ. դ) ընթերցողների ցուցակ. ե) շարժական ցուցակ. զ) մատենա վիճակագրական տեղեկութիւնների համար և է) նկատողութիւնների մատեան:

Մատեանները պիտի լինին ժապաւինած և դրոշմած:

21) Մատենադարան-ընթերցարանը ունի սեպհական դրօշմը:



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1894 թ. փետրվարի 20-ին՝ երեկոցեան 7¹/₂ ժամին Քիֆլիզի քաղաքային Գուժայի դահլիճում կայացաւ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովը, ներկայութեամբ 30 անդամների, որոնց թիւը վերջը հասաւ 44-ի, նախագահութեամբ բժ. Բ. Նաւասարդեանի:

Ժողովը բանալով՝ նախագահը հաղորդեց Ընկերութեան Գորու ճիւղի անդամ՝ Ստեփան աւագ քահանայ Տէր-Ստեփանեանի և Կարսի ճիւղի անդամ՝ բժ. Շահրիար Մէլիք-Փարսաղանեանի մահը, և մատնանիշ անելով նրանց եռանդուն գործունէութեան վրայ, առաջարկեց ժողովին յարգել հանգուցեալների յիշատակը ոտքի կանգնելով: Ժողովականները ոտքի կանգնելով՝ արտայայտեցին իրանց յարգանքը:

Կարգացուեց նախորդ նիստի արձանագրութիւնը և վաւերացուեց:

Ժողովը տեղեկանալով, որ երկու անձինք՝ պ.պ. Մինաս Սուլխանեան և Նզոր Զոհրաբեան Ընկերութեան մշտական անդամ են գրուել, վճռեց շնորհակալութիւն յայտնել այդ պարոններին:

Ապա կարգացուեց 1894 թ. ընդհանուր՝ այն է խորհրդի և ճիւղերի նախահաշիւը:

Պ. Մալխասեան առաջարկեց նախքան նախահաշիւներ հաստատելը՝ կարգաւ Ընկերութեան 15 անդամների կողմից Ընդհանուր ժողովին ուղարկած գրութիւնը, որը կապ ունի

նախահաշուի հետ և ապա միայն հաստատել նախահաշիւը: Ժողովը յարգեց այդ առաջարկութիւնը:

Պ. Շիրվանզադէ այն կարծիքը յայտնեց, որ Ընկերութեան գործողներին խրախուսելու համար, շատ լաւ կը լինի, որ Ընդհանուր ժողովի կողմից շնորհակալութիւն յայտնուի այն ճիւղերին, որոնք եռանդուն գործունէութիւն են ցոյց տալիս: Այդ կարծիքին միացան պ.պ. Խոտինեան և Մէլիք-Սարգսեան:

Պ. Կարապետեան նկատեց, որ անյարմար բան է Բարեգործական Ընկերութեան անդամներին շնորհակալութիւն յայտնել, քանի որ առհասարակ ընդունուած չէ շնորհակալութիւն յայտնել: Պ. Բարսամեան յայտնեց, որ ինքը համաձայն է այդ կարծիքին:

Պ. Ա. Արասխանեան. «Ես սկզբունքով դէմ չեմ շնորհակալութիւն յայտնելուն, բայց խնդիրը նրանումն է, որ շատ դժուար է որոշել, թէ որ ճիւղը աւելի եռանդուն է և որը պակաս, բիւզժէտի մեծութիւնը դեռ ևս ապացոյց չէ եռանդի: Կարող է մի ճիւղ շատ եռանդուն լինել, բայց հանգամանքները այնքան աննպաստ, հասարակութիւնը այնքան անտարբեր, որ ճիւղը չը նայած իւր եռանդին՝ աւելի պակաս մոտք կ'ունենայ: Օրինակ՝ Շուշու ճիւղը շատ եռանդուն գործողներից է, բայց ինչ կարող է նա անել, Շուշու հասարակութեան նման մի փթած հասարակութեան մէջ»:

Պ. Նազարեան նկատում է, որ ընդհակառակը Շուշու հասարակութիւնը շատ համակրութեամբ է վերաբերվում ճիւղի գործունէութեանը:

Այդ կարծիքին միացաւ և պ. Կարապետեան: Պ. Մէլիք-Ազարեան ևս միանալով այդ կարծիքին, առաջարկում է յանդիմանել պ. Արասխանեանին, որ նա Շուշու հասարակութեան հասցէին ուղղում է փթած վիրաւորական բառը:

Նախագահի առաջարկութեամբ պ. Արասխանեան չետ

վերցրեց այդ խօսքը: Իսկ ժողովը մերժեց շնորհակալութիւն յայտնելու առաջարկը, քանի որ Խորհուրդը, ինչպէս յայտնեցին Խորհրդի անդամները պ.պ. Ա. Մէլիք-Ազարեան և Քալանթար, այդպիսի դէպքերում շնորհակալութիւն իւր կողմից յայտնում է:

Կարգացուեց 15 անդամների կողմից սուլած թուղթը՝ Կարսի և Երևանի նահանգների սովեալներին օգնելու համար, և դորա հետ միասին Խորհրդի գրութիւնը, որի մէջ սուլած էր թէ Խորհուրդը ինքը ջերմ ցանկութիւն ունի օգնութեան գալ սովեալներին, սակայն Ընկերութիւնը բոլորովին միջոցներ չունի. միակ միջոցը հանդանակութիւն անելն է, և խնդրում է Ընդհանուր ժողովից թույլ տալ, որ ստանալիք գումարները ինքը Խորհուրդը իւր բարեհայեցողութեամբ կարգադրի և բաժանի:

ԲԺ. Արժուոնին հարց է առաջարկում թէ ինչ միջոցներով կարելի է փող հաւաքել: Պ.պ. Ս. Յարութիւնեան և Կարապետեան այս հարցին պատասխանում են, թէ պէտք է ինքը Ընկերութիւնը, իւր անդամների միջոցով նախաձեռնող հանդիսանայ և սկսի փողեր հաւաքել: Պ. Յարութիւնեան աւելացնում է, որ ցանկալի է, որ Խորհուրդը, բացի Թիֆլիսում հանդանակութիւն անելը, առաջարկէր ճիւղերին, որ նրանք էլ հանդանակութիւն բանան:

Պ. Արասխանեան նկատում է, որ Խորհուրդը իւր դերի մէջ չէ. երբ փոխանակ ինքը ցոյց տալու փող հաւաքելու և օգնելու միջոցներ, Ընդհանուր ժողովին է հարցնում այդ մասին: Երբ Խորհուրդը, աւելացրեց պ. Արասխանեան, պէտք է գնար, զաւառներում տեղեկութիւններ հաւաքէր և Ընդհանուր ժողովին հաղորդէր, և ոչ թէ սպասէր, որ Ընկերութեան անդամները նրան չիշեցնեն այդ մասին: Հարկաւոր է անմիջապէս ձեռնարկել այդ գործին, ազդել սրտերի վրայ, պրօպագանդա անել:

Պ. Մալումեան. «Իմ կարծիքով, երբ ժողովուրդը քաղցած է և անմիջական օգնութեան է սպասում, այլ ևս ժամանակ չէ, որ դեռ Խորհուրդը զնայ տեղեկութիւններ հաւաքէ, ընդհանուր ժողովին տեղեկութիւններ բերէ: Իսկ հասարակական ձևով փող հաւաքել անկարելի է, որովհետև այդ մասին առանձին թույլտուութիւն է հարկաւոր:

Պ. Քալանթար յայտնեց, որ Խորհուրդը ինքը առանց նոր տեղեկութիւններ հաւաքելու էլ լաւ գիտէ սովեալների վիճակը, զիտէ, որ անմիջական օգնութիւն է պէտք, սակայն հարցը նրա մէջն է, թէ որտեղից և ինչ ձանապարհով փող հաւաքել: Ընդհանուր ժողովին թուղթ սուղները նոր բան չեն աւում, յայտնելով թէ պէտք է օգնել սովեալներին. նրանք ոչ մի միջոց չեն ցոյց տալի. Իսկ Ընկերութիւնը նիւթական միջոցներ չունի, խօլերայի ժամանակ 5000 ր. բաց թողեց և մինչև այսօր այդ գումարը յետ չէ ստացուել:

Նախադահը նկատեց, որ հիմք չըկայ մեղադրելու Խորհրդին, թէ նա ոչինչ միջոցների չէ դիմել, առաջարկեց ժողովին վստահութիւն յայտնել Խորհրդի և նրա գործունէութեան, որը և ժողովը յայտնեց:

Ապա պ. նախադահը օգնութեան և հանդանակութեան հարցը ձեակերպեց այսպէս.— 1) Խորհուրդը լինի մի կենդանու, որտեղ հաւաքուեն բոլոր փողերը՝ սովեալներին օգնելու նպատակով, նաև լինի փողի ծախսողը. 2) առաջարկել Խորհրդին, որ նա այդ գործի մէջ իրան օգնելու համար ընտրի Ընկերութեան անդամներից մի օգնող մասնաժողով: Այդ ձեակերպութիւնը ժողովը ընդունեց:

Ապա ժողովը հաստատեց Խորհրդի և ճիւղերի 1894 թ. նախահաշիւը Ընդհանուր ժողովը արտօնութիւն տուեց Խորհրդին հաստատելու Վաղարշապատի ճիւղի նախագծած շեքամապահական կայարանը:

Այդ ընթացիկ գործերը հաստատելուց յետոյ Ընդհանուր

ժողովը ձեռնարկեց պաշտօնատար անձանց ընտրութեան պէտք է ընտրուէին—1) Ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար. 2) Խորհրդի 5 անդամ և 3 փոխ-անդամ. 3) վերաստուգող յանձնաժողովի 3 անդամ և 4) Կենդրոնական Մատենադարան-Ընթերցանի մասնաժողովի 5 անդամ:


Գաղանի քուէարկութեամբ ընտրուեցին՝

Ընդհանուր ժողովի նախագահ՝ բժ. Բ. Նաւասարդեան (33 սպ. 10 սև). Ընդհանուր ժողովի քարտուղար՝ Խաչատուր Մալումեան (35 սպ. 9 սև). Խորհրդի անդամներ՝ Աղէքսանդր Մանթաշեան (միաձայն 44 ձայնով), Աղէքսանդր Մէլիք-Ազարեան (38 սպ. 5 սև), ինժիներ Մկրտիչ Կարապետեան (31 սպ. 13 սև), բժ. Վ. Արծրունի (30 սպ. 13 սև), Ստեփան Սուլխանեան (29 սպ. 14 սև): Փոխ-անդամ Տիգրան Նազարեան (33 սպ. 10 սև). Վերաստուգող Յանձնաժողովի անդամներ՝ Յովհաննէս Ստեփանեան (39 սպ. 4 սև), Նազարէթ Տիգրանեան (38 սպ. 6 սև). Աւետիս Վարդապետեան (37 սպ. 6 սև):

Մատենադարանի մասնաժողովի անդամներ՝ Յակովբ Քոչարեան (39 սպ. 4 սև), Ստեփաննոս Մալխասեան (38 սպ. 5 սև), իշխանուհի Սօֆիա Արղութեան (38 սպ. 6 սև). Շիրվանզադէ (37 սպ. 6 սև). Սամուէլ Բալաղեան (37 սպ. 7 սև): Ընտրութիւնների հատեանքը յայտնելուց յետոյ, նախագահը յայտարարեց ժողովը փակուած:

Նախագահ Ընդհանուր ժողովի՝ Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Քարտուղար Խ. Մալումեան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1894 թ. դեկտեմբերի 25-ին, քաղաքային դումայի դահլիճում կայացաւ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովը, 22 անդամների ներկայութեամբ, որոնց թիւը վերջումը հասաւ 40-ի:

Բանարով ժողովը, նախագահը՝ Բժշկապետ Նաւասարդեան առաջարկեց չարգել նորին Մեծութեան հանգուցեալ Աղէքսանդր III Կայսեր յիշատակը՝ ոտի կանգնելով, որը և անմիջապէս կատարուեց:

Կարգացուեց նախորդ Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը: Պ. Արասխանեան յայտնեց, որ ինքը խօսելիք ունի արձանագրութեան մի կէտի մասին և ասաց. «Խնդրում եմ հանել արձանագրութիւնից, իմ խօսքերի միջից, «աղմուկ հանել» բառերը, և այն բոլորը ինչ որ ասուած է այդ բառերի առիթով: Նոյնպէս խնդրում եմ ջնջել այն խօսքերը, թէ ես ընտրուած եմ եղել զբարարանական մասնաժողովի անդամների կանդիդատ»:

Ընդհանուր ժողովի քարտուղար Խ. Մալումեան պատասխանեց, որ ինքը իբրև ժողովից ընտրուած քարտուղար չի կարող հանել կամ ջնջել արձանագրութիւնից այն խօսքերը և այն որոշումները, որոնք ասուել և կայացել են:

Պ. Արասխանեան. «Ճշմարիտ է ես ասել եմ աղմուկ հանել խօսքերը, բայց որովհետև արձանագրութեան մէջ շատ անգամ բոլոր մանրամասնութիւնները չեն մտնուս, ուստի ես չէի կամենայ, որ իմ այդ խօսքերը մնային այդ գրու-

Թեան մէջ, իսկ ինչ վերաբերում է իմ կանդիդատ ընտրուելուն, ինձ Խորհուրդը այդ մասին ոչինչ չէ հաղորդել, ուստի խընդրում եմ հանել այդ ընտրութեան վերաբերեալ խօսքերը:

Ընդհանուր ժողովի քարտուղարը Այն, ինչ որ ասուած է եղել ժողովի մէջ, և այն էլ շատ որոշ կերպով, ինչ որ առաջ է բերել նոյն իսկ վիճաբանութիւն, ես պարտաւոր էի արձանագրել և արձանագրութիւնից չեմ կարող հանել, իսկ ինչ վերաբերում է այն կարծիքին, թէ Ընդհանուր ժողովի ընտրութեան մասին Խորհուրդը չէ հաղորդել պ. Արասխանեանին, այդ արձանագրութեան չէ վերաբերում, այդ մասին ժամանակին հաղորդուած է եղել Խորհրդին: Խորհրդի քարտուղար Հ. Առաքելեանը հաստատեց այդ:

Նախագահը. «Երկու կողմի խօսակցութիւնից էլ երևում է, որ այն ինչ որ արձանագրուած է, տեղի է ունեցել ժողովում և դա լոկ իրողութիւն է: Բայց որովհետեւ պ. Արասխանեան, այժմ, ինքը անյարմար է համարում իւր ասած խօսքերը և միւս կողմից, որպէս ղի այդ առիթով ի զուր ժամավաճառ չըլինինք, ես խնդրում եմ ժողովից, թոյլ տալ, որ կատարուի պ. Արասխանեանի խնդիրը»: Ընդհանուր ժողովի առաջարկութեամբ վերև յիշուած երկու կէտը հանուեց արձանագրութեան միջից:

Կարգացուեց վերաստուգողական ջանձնաժողովի զեկուցումը և Խորհրդի պարզաբանութիւնը:

Պ. Վարդապետեան նկատում է, որ Խորհուրդը իրաւունք չունէր չը հանդիմանել 5000 ր. դէժիցիտը, որ գոյացաւ խօլերայի ժամանակ: Այս նոյն միտքը յայտնեց և պ. Արասխանեան:

Հարցը պարզուելու համար կարգացուեց 1892 թ. Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը և Խորհրդի կարծիքը այն մասին, որ Ընկերութիւնը անկարող էր հանդիմանել որոշուած 1000 ր. միջոցներ չունենալու պատճառով:

Պարոններ՝ Ն. Տիրանեան, Փ. Վարդապետեան պնդում են, որ պէտք է անպատճառ հանդիմանել այդ պարտքը: Հայր Ղազարեան խօսելով նոյն մտքով, առաջարկում է, որ Ընկերութիւնը բոլոր միջոցներ ձեռք առնէ այդ պարտքը հանդիմանելու համար:

Պ. Քալանթար և պ. Մէլիք-Վարազեօղեան շեշտում են այն կէտի վրայ, որ ինքը Խորհուրդը բուռն ցանկութիւն է ունեցել հանդիմանել այդ պարտքը տարեկան որոշ գումարով, սակայն զրամական միջոցների պակասութիւնը մի կողմից, և ընթացիկ բազմութիւ կարիքները միւս կողմից, անհնարին են դարձրել այդ ցանկութեան իրագործումը:

Պ. Ա. Արասխանեան. «Ես կրկին անգամ առաջարկում եմ, որ Խորհուրդը անպատճառ լրացնի այդ դէժիցիտը առանց ուշացնելու»:

Նախագահ. «Ինչպէս ես նկատում եմ ժողովը չէ համակրում Ձեր առաջարկին»:

Պ. Արասխանեան. Ի՞նչ կը նշանակէ ժողովը չէ համակրում. Ձեր իրաւունքից դուրս է, պ. նախագահ, այդպիսի նկատողութիւն անել. դա կը նշանակէ ճնշում գործ դնել ժողովի արամագրութեան վրայ, ես մինչև անգամ առաջարկում եմ ժողովը ջանդիմանութիւն յայտնի Խորհրդին, որ նա ճշտութեամբ չէ կատարել իւր վրայ դրած պարտաւորութիւնը:

Նախագահը քուէարկութեան ենթարկեց պ. Արասխանեանի այդ առաջարկը, և ժողովը միաձայն, (բացի պ. Արասխանեանից) մերժեց նրան:

Պ. Ն. Մատինեան առաջարկում է ընտրել մի առանձին մասնաժողով, որը յատկապէս զբաղուէր այդ 5000 ր. պարտքը հանդիմանելով: Այդ կարծիքին միացան և բժ. Վ. Արժրունի, Ս. Լիսիցեան: Սակայն ժողովը մերժեց առանձին մասնաժողով կազմելու առաջարկութիւնը:

նաւոր անձանց, այն եղանակով, ինչ եղանակով ինքը նպատակայարմար կը դատի:

Ապա նախագահը առաջարկեց ժողովի վճռին հետեւեալ հարցը. — «Յանկանում է արդեօք ժողովը, որ Խորհուրդը վերելիշուած ձևի յայտարարութիւններ այն է պաշտօնական յանձնարարութիւններ տայ քարտուղարին, թէ ոչ»: ժողովը քուէարկութեամբ որոշեց «Քարտուղարին այդպիսի յանձնարարութիւններ չը տալ. ինչպէս ճիւղերի գործունէութեան համար զեկուցագիր կազմելն է, այդ գործը յանձնել կամ Խորհրդի կամ Ընկերութեան անդամներին, ուրեմն և քարտուղարին այն ղեպքում, երբ նա Ընկերութեան անդամ է»: Բացի զրանից Ընդհանուր ժողովը, ձայների մեծամասնութեամբ ընդունեց հետեւեալ առաջարկութիւնը. — «Առաջարկել, որ, ապագայում Խորհուրդը ներկայացնի Ընդհանուր ժողովին՝ ճիւղերի գործունէութեան պատկերը առանց համեմատութիւն անելու և կարգերի բաժանելու, ոչ այն ձևով, ինչ ձևով արուած է վերջին տեղեկագրի մէջ»:

Իրանից չեսոյ նախագահը յայտարարեց ժողովը փակուած գիշերուայ ժամը 12-ին:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ ԲՃՂԿԱՅԷՄ Բ. ՆԱՍՏԱՍՅԱՆ
Քարտուղար՝ Խ. ՄԱՂԱՍԵՆ



70—6084 . մեայրնայոթ

Հ Ա Շ Ի Ի

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ 1894 թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇԻԻ

ՄՈՒՏԻՔ

1. Անցեալ տարուանից մնացորդ	400	—
2. Ընթերցարանի յատուկ գումարն	1198	— 13
3. Անդամավճար 222	1110	—
4. Պարահանդէսից	1158	— 26
5. Աղէքսանդր Աղամալեանից	50	—
6. Թատրոնասէրներից	9	— 58
7. Տուփերից		
8. Ընթերցարանի և Ալիքու չակա դպր. գրամագլխին 1598 թ. 13 կ. 0/0	216	— 4202—97
Ետևը սովեալների օգտին		
9. Վեհափառ Կաթողիկոսից	200	—
10. Խորհրդից	1000	—
11. «Մշակի» խմբագրութիւնից	700	—
12. Ն. Նախիջևանից Գեր. Մխիթար վ. ի միջոցաւ	1000	—
		<hr/> Փոխարկելի 4202—97

70—8141 . վիկրայոթ

Փոխանցումն . 4202—97

- 13. Ս. Սինուրից 339 —
- 14. Մոսկուլայից պ. Շահազիզի միջոցաւ 1000 —
- 15. , , . Ս. Ս. Աջեմեանի և
Ներսիսեանի միջոցաւ 424 —
- 16. Բագուարեանի Բէլիզեանից 200 —
- 17. Բագուից Ս. Ս. Արտէմեանի միջոցով 234—24
- 18. Պողոս Պողոսեանից 10 —
- 19. Թիֆլիսից պ. Կարապետ Ղարիբեանից 50 —
- 20. Վաճառուած ցորենի զսակներից 60
հատ 12—50
- 21. Սովեալների մնացորդ գրամագլխի 0/0 88 — 5257—74

Գումար 9460—71

Ե Լ Ք

- 1. Զատիկուայ առթիւ Երևանի չքաւորն . 200 —
- 2. Յէնզի համար ուսուցիչներին 570 —
- 3. Թեմական դպրոցին 300 —
- 4. Օր. Գայեանեան դպրոցին 100 —
- 5. Նորգայ երկսեռ դպրոցներին 50 —
- 6. Խորհրդին 96—80
- 7. Տուփերին 11 —
- 8. Դիւանական ծախսերի 25 —
- 9. Զանազան ծախսերի պ. Կէդէնի
ձեռքով 15—90
- 10. Նախահաշուով գրքեր և գնուած 50 — 1418—70

Սովելոց համար

- 11. Սովելոց վճարած և փողով և ալիւրով 99—13

Փոխարեւի . 1418—70

Փոխանցումն . 1418—70

- 12. Ն. Բայազէտի վարչ. ուղարկուած
է 300 ռ. փողտի ծախս 1 ռ. 83 կ. 301—83
- 13. Դարաչիչազի և Ն. Բայազէտի սո-
վեալների համար դրուած է Աղս-
տաֆալուժ գորեն 1292 փ. իր
քրէհով և ծախսով առանձին հա-
շուով 1616—50
- 14. Արևբուլախի և Աբարանի սովեալ-
ների համար դրուած է Կեր-
չուժ գորեն 1719 փ. 38 Ք. իր
քրէհով և ծախսով մանրամ. ա-
ռանձ. հաշուով 2571—99
- 15. Խորհրդից ստացած 299 փ. 32 Ք.
ցորենի քրէհ տես Կերչի հաշուով
- 16. ձեմարանի սաներին ճանապարհա-
ծախս և եւփուէնջիների 233 — 4822—45
- 17. Գրադարանի և Ալիքուչակայ դրա-
մագլուխն իր 0/0-ով 1814—13
- 18. Սովեալների օգտին ստացուած դրա-
մագլխից աւելացաւ իր 0/0-ով 1405—43

Գումար 9460—71

Մ Ո Ւ Տ Ք

Գնուած ցորեն

- 1. Աղստաֆուժ 1292 փ. — Ք.
- 2. Կերչուժ 1719 , 38 ,
- 3. Խորհրդից ստացուած է 299 , 32 ,
- 4. Աւելացած է 23 , 17 ,

Կշիւն . . 3335 փ. 07 Ք.

07—8141 Գնուած մեղակ

1. Կերչի հաշիւներով	359
2. Խորհրդից ստացուած է	65
	<hr/>
	424

Ե Լ Ք

Գնուած ցորեան բաժանուել է հետևեալ կերպով.

Նոր Բայեագէտի գիւղերում

	Ընտանիք.	Նափար.	փութ.	Ֆ.
1. Քարիմբեանդ	34	169	42	10
2. Դալիղարտաշ	99	441	164	30
3. Նորադուղ	82	385	144	25
4. Ղշլաղ	70	300	110	15
5. Փաշվեանտ	67	300	112	20
	<hr/>			
	352	1595	574	20

Դարաչիչազի գիւղերի

	Ընտանիք.	Նափար.	փութ.	Ֆ.
1. Ճարուխ	47	525	205	25
2. Բարագշի	52	405	150	—
3. Բայջարուխ	50	555	230	05
	<hr/>			
	149	1485	585	30

Ղրիքուլատի գիւղերի

	Ընտանիք.	Նափար.	փութ.	Ֆ.
1. Բաշգիւղ	7	36	19	35
2. Արամուս	28	156	90	20
3. Բարցաբի	25	149	88	—

	Ընտանիք.	Նափար.	փութ.	Ֆ.
4. Գեամրիս	32	167	100	05
5. Ճաթղուան	12	55	33	—
	<hr/>			
	104	563	331	20

Աքարանի գիւղերի

	Ընտանիք.	Նափար.	փութ.	Ֆ.
1. Ղարաբուլաղ	28	117	87	30
2. Նորաշէն	14	71	53	10
3. Ածընկալ	21	101	75	30
4. Սազուլ	19	81	60	30
5. Ափնադեղ	45	225	165	20
6. Բաքեանլու	27	145	89	08
7. Շիրաղալայ	32	144	88	—
8. Բաղարգիւղ	26	132	83	05
9. Ղալաչայ	21	108	64	—
10. Ղալթուր	4	23	14	15
11. Իլանչալան	20	88	56	10
12. Բլիսեր	39	206	181	10
13. Չամրու	60	244	122	—
14. Ղարաքիլիսա	72	305	350	20
15. Ղազանֆար	79	345	171	20
	<hr/>			
	507	2335	1663	08

Ն. Բայազէտի սովեալ-

ների յանձնաժողովին ուղարկվ	100	—
Ֆորենը ալիւր դարձնելիս պակսել է	24	20
Կարապետ Մինեսերեարին Իլանզա	10	—
Աւանեցիներին	12	—
Ալիքուչակցոց	5	28 14 —

Աւանցիներն Աստից վերառած	13	—
Ալիքուչակցի Յարութիւնեան	3	—
Կարապետ Յարութիւնեան Շահրիզեցի	3	— 29
		<hr/>
		180—09

Համագումար . . . 1117 6007 3335—07

Մեշոկ	1	
1. Հաշիւներով վաճառուած է	60	
2. Փչացած է	14	
3. Պատրաստի	250	
	<hr/>	
Գումար	424	

100	100	
30	30	
10	10	
15	15	
14	14	

Հ Ա Շ Ի Ի

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրապօլի տեղական վարչութեան 1894 թ. համար:

1894 թ. Ալէքսանդրապօլու ճիւղը բաղկացած է եղել 65 անդամներից. Վարչութիւնը կազմուած է եղել հետևեալ անձինքներից — պ.պ. Արշակ Կարապետեան (նախագահ), Աղէքսանդր Արաբաջեան, Սարգիս Սահակեան, Արամ Բաղդասարեան և օր. Օլիմպիադա Անդրէասեան:

Վարչութիւնը ամբողջ տարուայ ընթացքում ունեցել է 13 նիստ:

ԵԼԵԻՄՏԱՅՈՅՑ

1894 թ. համար կազմուած է եղել հետևեալ նախահաշիւը.

Մ Ո Ւ Տ Ք

1) Անդամավճար 40 հոգուց	200	ր. — 4.
2) Մնացորդ 1893 թ.	636	» 50 »
	<hr/>	
	836	ր. 50 կ.

Ե Լ Ք

1) Ընկերութեանս 5 որդեկիրներին	100	ր.
2) 5% անձեռնմխելի	10	»

- 3) Տառապեալներին նպաստ 128 »
 - 4) Գիւճանական ծախս 7 »
 - 5) Բացուելի գրադարան-ընթերցարանին 591 » 50 կ.
-
- 836 ր. 50 կ.

1894 թ. իրականացւեալ եղել է.

Մ Ո Ւ Տ Ք

- 1) Նախորդ 1893 թ. մնացորդ առ 1-ն յուճարի 1894 թ. 760 ր. 86 կ.
- 2) 1893 թ. դեկտ. 14-ին տուած պարահան-դիսից 489 » 45 »
- 3) Եղբ. Գրամբեաններից ի չիշատակ իրանց հանգուցեալ հօր Բաղդասար աղա Գրամբեանի 325 » — »
- 4) Հայ սիրողների ներկայացումից կաշացած մարտի 25-ին 86 » 35 »
- 5) Ռուսաց խմբի ներկայացումից կաշացած մարտի 29-ին 113 » 59 »
- 6) Վեհափ. Վաթուղիկոսից, յօգուտ գաւառիս սովեալներին 500 » — »
- 7) «Մշակ»-ի խմբագրութիւնից յօգուտ ճաշարանի 768 » — »
- 8) Ընկերութեանս Խորհրդից՝ սովեալներին սերմացու և ուտելիք բաժանելու համար . 1400 » — »
- 9) Ժապաւիտեալ մատենաով յօգուտ ճաշարանի նուէր 488 » 14 »
- 10) Քաղաքիս եկեղեցիներում շրջեցրած զան-ձանակներից 140 » 30 »
- 11) Զրի-էժանագին ճաշարանի ծախսած բա-ժիններից 180 » 47 »

Փոխադրելի 5252 ր. 16 կ.

Փոխանցումն 5252 ր. 16 կ.

- 12) Գրադարան-ընթերցարանին յատկացրած փողի տոկոսը 70 ր. 68 կ.
 - 13) 1892 թ. խօշերալի աւթիւ քաղաքումս Ժողոված փողերի մնացորդը պ.պ. Ռա-ֆայէլեանից, Խալաթեանից, Մելիքեանից և Սէյլանեանից 300 » — »
 - 14) Տփխիսի վաճառական պ. Գէորգ Յակոբեանից 50 փ. ցորեն, որի փուլթը 1 ր. 40 կ. հաշուելով 70 » — »
 - 15) Նոյն ցորենի համար ճանապարհածախս նոյնից 15 » — »
 - 16) Տփխիսի վաճառական պ. Գրիգոր Բայանդուբեանից 30 փուլթ ալիւր, փուլթ մի րուբլի հաշուելով 30 » — »
 - 17) Արմաւիրից, եղբայր Տարասովներից՝ յօգուտ սովելոց 100 » — »
 - 18) Հանգուցեալ Թադէոս Վարդպատրիկեանի կտակի համաձայն պ. Յովհաննէս Կոստանեանից 200 » — »
 - 19) Խորհրդից՝ ուսուցիչներին ցէնզի պատրաստելու համար 300 » — »
 - 20) Պ. պ. Յակովբ Տէր-Պողոսեանից և Խաչատուր Ղասաբեանից նուէր 24 » — »
 - 21) Զրի-էժանագին ճաշարանից մնացած նիւթերի վաճառումից 44 » 55 »
 - 22) 65 անդամներից վճար 325 » — »
-
- Գումար 6731 ր. 39 կ.

Ե Լ Ք

- 1) Զրիւնէժանագին ճաշարանին բացման օրից մինչև փակուիլը (յուն. 24—ապր. 24). 1642 թ. 66 կ.
 - 2) Սովեալներին բաժանուած է սերմացու և ուտելիք 1712 փ. 15 զր. ցորեն, արժուողութեամբ 2248 » 55 »
 - 3) Սովեալներին բաժանած սերմացու և ուտելիք 1570 փ. գարի, արժողութեամբ 1369 » 09 »
 - 4) Սերմացու և ուտելիք բաժանող մասնախումբը սովեալներին ցուցակագրելիս մանր ծախս արել է 85 » 04 »
 - 5) Գրամով բաժանուած է քաղաքի և զիւղերի սովեալներին 166 » 80 »
 - 6) Սովեալներին բաժանած է Տիխիսից ստացած 50 փ. ցորէնը և 30 փութ ալիւրը, արժողութեամբ 100 » — »
 - 7) Յիշեալ ցորէնի և ալիւրի ճանապարհածախս 15 » — »
 - 8) Տաճկաստանի գաղթականնրին նպաստ հաշրենիք դառնալու 36 » 50 »
 - 9) Գիւղացիներին փոխարինաբար արուած սերմացուն ժողովելիս շտեմարանի, ձիերի, գործակատարի և այլ մանր ծախս 186 » 47 »
 - 10) Ընկերութեան որդեգիրներին շորերի համար 110 » — »
 - 11) Յէնզի համար 6 ուսուցչի 163 » — »
 - 12) Ներսիսեան դպրոց գնացող երկու աշակերտի ճանապարհածախս 6 » — »
 - 13) Գիււանական ծախս 50 » 02 »
- Գումար . . . 6179 թ. 13 կ.
-
- Առ 1-ն յունուարի կանխիկ դրամով մնում է 552 » 26 »
- Համագումար . . 6731 թ. 39 կ.

Հաշուէտարում Վարչութեանս բոլոր և գլխաւոր ուշադրութիւնը կենդրոնացած է եղել քաղաքի և զիւղերի սովեալներին օգնութիւն տալու: Այդ նպատակի համար Ընդհանուր Ժողովի որոշմամբ քաղաքի սովեալների համար բացուել է ձրիւնէժանագին ճաշարան, իսկ զիւղերում բաժանուել է սերմացու և ուտելիք, թէ հացահատիկներով և թէ դրամով: Թէ առաջին և թէ երկրորդ գործը կատարուել են առանձին մասնախմբերի ձեռքով:

Ա. ճաշարանը իր բոլոր գոյութեան ընթացքում—յունուարի 24-ից մինչև ապրիլի 24-ը ամենատեսակ ծախս ունեցել է 1642 թ. 66 կոպ.: Նրա ամբողջ գոյութեան ընթացքում նրանից օգտուել են 559 ընտանիք օրական մօտաւորապէս 260 ընտանիք: Ճաշարանը կառավարող մասնախմբի անդամներ եղել են՝ յարգելի տ. Աննա Խոյեցեան, օր. Ե. Սանոյեան, պ.պ. Թադէոս Արշակունի, Թադէոս Խզմալեան, Աղէքսանդր Ղասաբեան, Պետրոս Մոճուռեան և Յակովբ Խաչվանքեան: Նրանք ունեցել են ինն կանոնաւոր նիստեր, ուր արծարծուել և վճռուել են ճաշարանի վերաբերեալ 39 հարցեր: Մասնախումբը իր եռանդուն գործունէութեան և օրինակելի կանոնաւոր հաշուապահութեան համար արժանացել է Վարչութեանս գրաւոր շնորհակալութեան:

Բ. Սերմացու և ուտելիք բաժանող մասնախմբի անդամներ եղել են՝ պ.պ. Թադէոս Խզմալեան, Յակովբ Խաչվանքեան, Ստեփան Վեհապետեան, Արամ Բաղդասարեան, Աւետիք Մալայեան, Գէորգ Միքայէլեան, Յովհաննէս Յակովբեան և Վաղարշակ Ստեփանեան: Նախագահն եղել է պ. Ա. Վարապետեան:

Ա. մասնախումբը գիւղացիներին իբրև սերմացու փոխարինաբար բաժանել է 1422 փ. 20 զր. ցորէն և 1096 փ. գարի, որից օգտուել են 39 զիւղ կամ 539 ընտանիք:

Բ. մասնախումբը իբրև ուտելիք բաժանել է 297 փ. 20 զր. գարի, 25 փ. ալիւր և 286 փ. ցորենալիւր, որից


քաղաքում՝ օգտուել են 112 ընտանիք կամ 525 հոգի և 10 գիւղ կամ 86 ընտանիք:

Գիւղացիներին փոխարինաբար բաժանած սերմացուն զանազան չարգելի պատճառներով հաշուէտարու վերջին (կալի ժամանակ) վարչութիւնս չը կարողացաւ բոլորը ժողովել: Նրանից յետ է ստացուել միայն 306 փ. 13 գր. ցորեն և 90 փ. 28 գր. գարի:

Նախագահ Վարչութեան՝ Արշակ Կարապետեան

Անդամներ	}	0. Անդրէասեան
		Աղ. Արտեմէան
		Խ. Չիլոպեան
		Ա. Բաղդասարեան

Դործավար՝ Ա. Փարտուղեան



Հ Ա Շ Ի Ի

ՊՈՂԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Շոր-Բայազէտի տեղական վարչութեան

1894 թ.

Մ Ո Ւ Տ Ք

- | | | |
|---|----------|-------|
| 1. Տարեկան անդամավճար (35 անդամ) | 175 ր. | — 4. |
| 2. Նուէրներ դրամով (յատուկ) | 3991 » | 45 » |
| 3. Իրեղենների վաճառքից (մէշոկներ, կարբոլի տակառ) | 3 » | 80 » |
| 4. Պատահական (աւելացած վարչ. գանձապահի կասսայում) | — » | 47 » |
| | <hr/> | |
| | 417.) ր. | 72 կ. |

Բացի դորանից վարչութիւնս ստացել է նուէրներ յօգուտ քաղաքիս և գաւառիս սովեալների ցորենով և ալիւրով ըստ հետևելոցն.

- | | | |
|--|--------|------|
| 1. Պ. Աղէքսանդր Մամիկոնեանի միջոցով ալիւր (Աղստաֆայ) | 115 փ. | — Ֆ. |
| 2. Խորհրդի միջոցով ցորեն և ալիւր | 349 » | 21 » |
| 3. Երևանի տեղ. վարչ. ցորեն և ալիւր | 90 » | — » |

554 փ. 21 Ֆ.

Դրամով ստացուած նուէրները եղել են նոյնպէս յօգուտ քաղաքիս և գաւառիս սովեալների հետեւեալ կերպով.

1. Խորհրդի միջոցով	1600	ր.
2. «Մշակ»ի միջոցով	834	»
3. Վեհափառ Հայրապետից—գործակալ Կիւրեղ վ. միջոցով	800	»
4. Երևանի տեղ. վարչ. միջոցով (Ն. Նախիջևանում հանգանակած)	300	»
5. Տիգրան Ափրիկեանից (Մոսկուա).	100	»
6. Մի խումբ հայ աշակերտներից (Շուշի)	10	»
7. Օրեսասյի հայ ուսանողներից (Գ. Բուդուժեանի միջոցով).	168	»
8. Հին-Նախիջևանից. — Գրիգորիս վարդապետի հանգանակած	68	»
9. Պ. Իւզբաշեանից (Բոժից Պրոմիսլ)	5	»
10. Պ. Պօպովից (Մտաւրոպոլ)	100	»
11. Պ. Գ. Ափրիկեանից—Երևանի մի խումբ հայ աշակերտներից հանգանակած	6	» 45 կ.
<hr/>		
3991		ր. 45 կ.

Ե Լ Ք

1. Ուսումնարանին	50	ր.
2. Ուսանողներին	80	»
3. Տառապեալներին	3865	» 08 կ.
4. Դիւանի և այլ ծախք	158	» 54 »
5. 5% անձեռնմխելի	9	» — »
<hr/>		
4162		ր. 62 կ.

Ծախքի հաշիւը աւելի ևս լուսաբանած լինելու համար՝ աւելացնենք այդ պատկերին հետեւեալը.—

Ա. Ուսումնարանի համար ծախսուած 50 ր. գումարից

վարչութիւնս իւր ձեռքով գնել է 10 հատ աշակերտական նոր ձեւի նստարան՝ երկ-երկու հոգու տեղ՝ յանձնելով քաղաքիս Հայոց երկսեռ ուսումնարանին:

Բ. Ուսանողների համար ծախսուած 80 ր. գումարը վարչութիւնս գործադրել է ըստ հետեւելոյն—իւր հինգ որդեգիր աշակերտ և աշակերտուհիների վրայ, որոնք սովորում են քաղաքիս հայոց եկ. ծխակ. ուսումնարանում, ծախսուած է 40 ր. մատակարարելով նրանց համար ուսման վարձ, հագուստ և դասական առարկաներ: Իսկ մնացած 40 ր. մատակարարուած է հագուստ և դասական պիտոյք 23 աղքատ աշակերտ, աշակերտուհու:

Գ. Տառապեալների օգտին ստացուած 3865 ր. 8 կոպ. նուէրը և 554 փ. 21 Ֆ. ցորենը և ալիւրը վարչութիւնս գործադրել է իւր նպատակի համեմատ, ըստ հետեւելոյն. 1) Այդ գումարից ուղարկուած է 1894 թ.-ի ընթացքում սովեալներին օգնելու համար քաղաքումս կազմուած մասնաժողովին ալիւր գնելու սովեալներին բաժանելու համար 1192 ր. 97 կ., որի ստացման համար վարչութիւնս ունի ապահովագրեր մասնաժողովից: Բացի դրանից վարչութեանս նախագահը և անդամներից ոմանք շարունակ մասնակցել են մասնաժողովի գործունէութեան՝ ներկայ լինելով դրամների ծախսելուն և նպաստների բաշխելուն: 2) Վարչութիւնս ինքը գնել է 2567 ր. 8 կ. կանխիկ դրամով ալիւր 2072 փ. 37 Ֆ. և որը նուէր ստացած 554 փ. 21 Ֆ. ալիւր—ցորենի հետ անուժ է 2627 փ. 18 Ֆ.: Սորանից վարչութիւնս ուղարկել է քաղաքիս սովելոց մասնաժողովին բաժանելու քաղաքիս տառապեալներին 360 փութ. իսկ մնացած 2267 փ. 18 Ֆ. ալիւրն և ցորենը վարչութիւնս ինքը բաշխել է սովեալ ազգաբնակչութեան ըստ հետեւելոյն: Քաղաքիս մէջ 622 փ. 17 Ֆ. և գաւառիս 16 հայ գիւղորայքում—որք են.— 1) Ղշլաղ—34 փ. 13 Ֆ. 2) Ղուլալի—204 փ. 26 Ֆ. 3) Քեօ-

սամահմադ—181 փ. 10 Ֆ. 4) Քեարիմքեանդ—50 փ. 5) Քիւզաչի—58 փ. 2 Ֆ. 6) Բաշքեանդ—68 փ. 6 Ֆ. 7) Երանոս—80 փութ. 8) Գեօլ—105 փ. 9) Աթամխան—203 փ. 10) Թաղաքեանդ—100 փ. 11) Ծակ-Քար—30 փ. 12) Ներքին-Ադիաման—160 փ. 13) Վերին-Ադիաման—70 փ. 24 Ֆ. 14) Գեօղարլարաչ—60 փ. 15) Արխբուլաղ—150 փ. 16) Վալիազալու—90 փ.—Գումարն է գիւղերում բաժ. 1645 փ. 1 Ֆ.: Բաշխումը կատարուել է թէ քաղաքում և թէ գիւղօրայքում վարչութեանս օրագիրների համաձայն (ընդամենը 15 օրագիր), իւր անդամների կամ առանձին նշանակած մարդկանց ձեռքով: Նախ քան բաշխումը առաջօրէն կազմուած են եղել աղքատ ընտանիքների ցուցակներ—իւրեանց անդամների թւով հանդերձ, որի համեմատ և բաշխուել են նպաստները: Այդ ցուցակները—թւով 38 հատ—պահվում են վարչութեանս գործերում՝ վաւերացրած լինելով այն անձինքների ստորագրութեամբ, որոնք բաշխել են նպաստները: Բաշխման ժամանակ գիւղերում ներկայ են զտնուել միշտ գիւղական տանուտէրերը և արժանահաւատ անձինք, որոնց օգնութեամբ և կազմուելիս են եղել աղքատ ընտանիքների ցուցակները:

3. Վարչութիւնս կանխիկ դրամով, դեղօրայքով, հազասեղենով և այլ միջոցներով օգնել է տառապեալներին ծախսելով—104 ր. 8 կ.:

Ուրեմն ընդամենը տառապեալների վրայ ծախսուած է 3865 ր. 8 կոպ.:

Դ. Դիւանի և մանր մունր ծախսուց մէջ են հաշուած ալիւրը տեղափոխելու կամ բերել տալու ճանապարհավարձը, գիւղերն ուղարկած մարդկանց ճանապարհածախսը, հեռագիրների, փոստաչին և այլ ծախսերը...

Ե. 9 ր. անձեռնմխելին ուղարկուած է Խորհրդին որպէս 50% 175 ր. սովորական մուտքի հաշուի:

Ինչպէս մուտքի, նոյնպէս և ելքի գումարները իւրեանց

բացատրութեամբ հանդերձ ժամանակագրական կարգով արձանագրուած են վարչութեանս հաշուեմատեանում: Իսկ ելքի իւրաքանչիւր յօդուածի համար վարչութիւնս ունի առանձին-առանձին ստացագրեր (№№ 1—67) այն անձերից, որոնք վաճառել են ալիւր կամ մի որևէ իր վարչութեանս և ստացել են նրանից լիովին արժէքը կամ փողը. նոյնպէս և այն անձերից, որոնք դրամով մի որևէ նպաստ են ստացել վարչութիւնիցս:

Այսպէս 1894 թ. ընթացքում ունեցած 4170 ր. 72 կ. մուտքից դուրս գալով 4162 ր. 62 կ. ծախքը, մնում է կանխիկ դրամ առ 1-ն յունվարի 1895 ամի 8 ր. 10 կոպ, որ և արձանագրուած է մուտք հաշուեմատեանի ներկայ 1895 թ. հաշուում:

Փոխ-նախագահ վարչութեան Ս. Բապիչեան

Գործավար-անդամ Գ. Բապիչեան

աւելցա խորհրդով մասնադրամանսն ձեռնարկելուց արտաքու
մէջ ի վերջ մասնադրամանսն ձեռնարկելուց մն ճարտարամ
մասնա մասն մասն մասն մասն մասն մասն մասն մասն մասն
գտնող ընդմեջն մյա (18—1 2/2) ցնորարարութեան մասն
մասն մ մասն մասն մասն մասն մասն մասն մասն մասն
մյա մ մասն մասն մասն մասն մասն մասն մասն մասն մասն

Հ Ա Շ Ի Ի

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՈՒԹԵԱՆ

ՇՈՒՇՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆԻ.

Վեցերորդ տարի

(1894 թ. յունվարի 1-ից մինչև 1895 թ. յունվարի 1-ը)

I

ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

1894 թ. յունվարի 1-ին Գրադարանն ունէր 2801 կտոր
գիրք՝ 4370 րուբ. 25 կոպ. արժողութեամբ: Մի տարուայ
ընթացքում՝ այն է մինչև յունվարի 1-ը 1895 թ. այդ
քանակութեան վրայ աւելացել է 371 հատոր գիրք՝ 463 ր.
48 կ. արժողութեամբ:

Այդ քանակութիւնը կազմուել է գլխաւորապէս վարչու-
թեան միջոցներով ձեռք բերուած ա) գրքերից, բ) պարբերա-
կան հրատարակութիւններից և գ) նուիրաբերութիւններից:

Վարչութեան միջոցներով ձեռք են բերուած գրքեր 130
կտոր՝ 166 ր. 72 կ. արժողութեամբ (հաշուած և կազմերի
փողը): Պարբերական հրատարակութիւններից կազմուել են
120 կտոր՝ 185 րուբ. 96 կ. արժողութեամբ:

Նուէր՝ Արամ Տէր-Խորաչէլեանից, ի չիշատակ իր հան-
գուցեալ հօր՝ Սիմէօն քահանայ Տէր-Խորաչէլեանի, 103 կտոր
գիրք 96 ր. 95 կ. արժողութեամբ:

Ուրեմն առ 1-ն յունվարի 1895 թ. գրադարանն ունի
3172 1) կտոր գիրք՝ 4833 րուբ. 73 կ. արժողութեամբ 2):

Մանօթ. 1) Այս հաշուի մէջ են մտած բոլոր պարբերական
հրատարակութիւնները, բացի օրագիրներից:

2) Այս գումարի մէջ մտած է նաև կազմերի փողը
իւրաքանչիւր կտոր գրքի համար 20 կ. հաշուած:
Գրադարան-ընթերցարանն ունի կահկարասիք, 302 րուբ.
46 կոպ. արժողութեամբ:

II

ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Գրադարան-ընթերցարանի գործունէութեան աստիճանա-
բար զարգացումը՝ սկսած նրա գոյութեան առաջին տարուա-
նից, երևում է ստորև առաջ բերուած թուանշաններից:
Տրուած են անդամակցա-

կան անդորրագրեր. — Ա. տարի. Բ. տ. Գ. տ. Դ. տ. Ե. տ. Զ. տ.

Տարեկան	9	1	4	3	5	6
— Ամսական	161	216	228	230	233	359
Մուտքի (օրական)	270	423	323	306	246	327

Գրաւականով գրքեր են տարուել կարդալու 1834 2631 3353 4202 3506 5371

Մանօթ. 1. Վերոյիշեալ հաշուի մէջ չեն մտնում Ընկերութեան
անդամները, որոնք օգտվում են գրադարան-ըն-
թերցարանից ձրիաբար:

2. Զ-րդ տարուայ տարեկան և ամսական անդորրա-
գրերի մէջ են և չունևոր բաժանորդներին տրուած

անդորրագրերը: Զուենկորներ եղել են տարեկան 2
և ամսական. 117 անդամ: Զուենկոր ընթերցողների
մեծ մասը եղել են աշակերտներ:

3. Տուն տարուած գրքերի հաշուի մէջ չեն մտնում
օրաթերթերը և բոլոր այն գրքերը, որոնք կար-
դացվում են ընթերցարանում:

Զ-րդ տարեշրջանում գրադարանն ունեցել է մոտը 193
ր. 25 կ. որը մաս մաս յանձնուած է վարչութեան:

Գրքերի բաշխման մատեանից երևում է, որ աւելի շատ
կարդացվում են վիպական գրուածքները: Յոց տալու համար
թէ աւելի որ հեղինակների աշխատութիւններն են կարդաց-
վում, այստեղ մի համառօտ վիճակագրական տեղեկութիւն
ենք առաջ բերում քաղած գրքերի բաշխման մատեանից:

Վերցրած են:

Բ ա Ֆ Ֆ ի. — Կայծեր—33 անգամ, Դաւիթ-բէկ—24,
Խենթը—24, Խաչ. յիշատ.—23, Զալալեղդին—21, Վէպիկ-
ներ—21, Ոսկի աքաղ.—19, Սամուէլ—17, Հայ կինը և հայ
երիտ.—16, Փունջ I և II—10, Խամս. Մելիք—5. Ընդա-
մենը Բաֆֆու զանազան հեղինակութիւնները վերցրուել են
213 անգամ:

Պ ո ռ ե ա ն. — Սօս. և Վարդ—19 անգամ, Շահէն—21,
Հացի խնդիր—12, Սկիզբն երկանց—10, Յեցեր—7, Բղդէ—
6 անգամ:

Ա բ ո վ ե ա ն. — Վէրք Հայաստ.—29:

Շ ի ր վ ա ն զ ա դ է. — Արսէն Դիմաքս.—21, Զուր յոյսեր—
12, Գործակ. յիշատ.—9, Նամուս—9, Խնամատար—8, Ա-
րամբին—8:

Ա ր ծ ր ու ն ի. — Էվէլինա—16, Այստեղ և այնտեղ—12:

Մ ե ր ե ն ց. — Երկունք—13, Թորոս Աւսնի—7, Թէոդ.

Ոշա.—4:

Ա զ ա յ ե ա ն. — Արութիւն և Մանուէլ—13, Երկու Քոյր
—5, Անահիտ—2:

Հազար ու մէկ զիշեր 6 (հատոր—31 անգ.)

Тургеневъ —102 անգ.

Толстой—64.

Достоевский—55.

Гончаровъ —51:

Այնուհետև աւելի շատ են կարդացուել հետեւեալ հեղի-
նակների գրուածքները, որոնց անունները զնուել ենք ըստ
առաւելութեան

Հայերէն. — Շէքսպիր, Շիլլեր, Մօլլիէր, Եժ (Առաջադիւն),
Սոնդրուկեան, Պարոնեան, Խրիմեան, Էօթէն Սիւ, Դիւմա, Հիւ-
գօ և Արպետեան:

Ռուսերէն. Зола, Шиллеръ, Островский, Шпильга-
генъ, Монтегацца, Диккенсъ, Шекспиръ, Гюго, Ска-
бичевск., Бѣлинскій, Гоголь, Лермонтовъ և Пушкинъ.

Պարբերական հրատարակութիւններից (ամսագիրներից)
աւելի շատ կարդացուել են՝ «Մուրճ», «Артистъ», «Вѣстн.
Европы», «Кн. Недѣли», «Русск. Мысль», «Сѣверн.
Вѣстникъ», «Миръ Божій», «Вѣстникъ Иност. Лит.» և
«Русское Богатство».

Գրադարան-ընթերցարանը Զ-րդ տարեշրջանում ստա-
նում էր հետեւեալ պարբերական հրատարակութիւնները.

1) ԱՄՍԱԳՐԵՐ ԵՒ ՇՈՒՄՈՒԹԵՐԹԵՐ:

- | | |
|------------------------|---------------------------|
| 1. „Вѣстн. Европы“. | 7. „Вопр. Фил. и Псих.“ |
| 2. „Сѣверн. Вѣстникъ“. | 8. „Вѣст. Иност. Лит.“ |
| 3. „Русск. Мысль“. | 9. „Всемирн. Иллюстр.“ |
| 4. „Артистъ“. | 10. „Трудъ“ |
| 5. „Русск. Богатство“. | 11. „Недѣля съ книжками“. |
| 6. „Миръ Божій“ | 12. „Стрекоза“. |

- 13. „Наука и Жизнь“.
- 14. «Մուրճ».
- 15. «Աղբիւր» և «Տարազ»
- 16. «Հանդէս Գրակ. և Պատմ.»
- 17. «Թատրոն»
- 18. «Արարատ»
- 19. «Հանդէս Ամսօրեայ»
- 20. «Մասիս»:

2) ՕՐԱԳԻՐ.

- 1. „Русск. Вѣдомости“.
 - 2. „Русская Жизнь“.
 - 3. „Новое Время“.
 - 4. „Кавказъ“.
 - 5. „Новое Обозрѣніе“.
 - 6. „Тифл. Листокъ“.
 - 7. „Каспій“.
 - 8. «Մշակ»
 - 9. «Արձագանք»
 - 10. «Նոր-Դար»
- Վարչութիւնը 1894 թ. տպագրել տուաւ աւելացած գրքերի չաւելուած գրացուցակը № 2.

Գրադարան-ընթերցարանի վեցամեայ գործունէութիւնը պարզ ցոյց է տալիս, որ այդ հիմնարկութիւնը հետզհետէ ընթերցող հասարակութեան համար պահանջ է դառնում. — Ընթերցող դասի շրջանը հետզհետէ ընդլայնում է. ընթերցողների թիւը՝ քաղաքիս զանազան ազգութիւններից, տարեցտարի աւելանում է: Այս հանգամանքը վարչութեան վրայ պարտք է դնում, որ նա առ այժմ իւր միջոցները չը սնայէ գործադրելու ընթերցարան-գրադարանի վրայ, մինչև որ Շուշին ունենայ մի հարուստ գրադարան, որ կարողանայ ընթերցող դասի պահանջները լցուցանել:

Տնօրէն Գրադարան-ընթերցարանի՝ Մ. Լաւադրեան

Անդամք վերատուտող յանձնաժողովի }
 Յ. Խաչատրեան }
 Ն. Տէր-Մկրտչեան }

Հ Ա Յ Ի Ի

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կարսի տեղական վարչութեան 1894 թ.

Մ Ո Ւ Տ Ք

- 1) Անդամավճար 88 հոգուց 440 ր. — 4.
 - 2) Նուէրներ սովորաց և գաղթականների օգտին 8672 » 20 »
 - 3) Նուէրներ աճների և այլ առթիւ 510 » — »
 - 4) Այլ եւ այլք. —
 - ա. Թատերասիրաց ներկայացումից . . . 113 » 47 »
 - բ. Սխալմամբ աւելորդ ելք գրուած . . . 1 » — »
 - գ. Խնայողական արկղում ունեցած գրատուն-ընթերցարանի յատուկ զուժարի և վարչութեանս ընթացիկ փոփոխութիւններ 66 » 43 »
 - դ. Եկեղեցիներում ունեցած վարչութեան գանձանակներից 113 » 65 »
 - 5) Նախորդ տարիներից գրատուն-ընթերցարանի համար եղած զուժարը 923 » 79 »
 - 6) 1893 թ. հաշուից մնացորդ և ընթերցարանի զուժարին աւելացնելիք 307 » 86 »
 - 7) Ներքին փոխառութեան 1893 թ. 4¹/₂ 0/0-աբեր տասն տոմսերի №№ 023404—023413 պետական արժէքը 1000 » — »
- Գումար . . . 12148 ր. 40 կ.

Ե Լ Ք

- 1) Կարսի երկսեռ դպրոցներին նպաստ. 400 ր. — 4.
- 2) Ուսանողներին. —
 - ա. Հագուստի 96—55
 - բ. Ցենզի 30 —
 - գ. ձեմարան գնացող 2 հոգու ա-
լանդադրամ 50 — 176—55
- 3) Տառապեալներին. — Տեղական 64—60
- 4) Սովեյրոց եւ գաղթական կարօտեալներին.
 - ա. Դրամով 528—71
 - բ. Բժշկութեան համար 36—55
 - գ. ձաշարանին կերակրի 535—95
 - » հացի 402—22
 - դ. Յորեն 196—69
 - ե. Գարի 55 —
 - զ. Ալիւր 3512—94
 - է. Քրիճի 75—05 5343—11
- 5) Նախահաշուից 5⁰/₀ անձեռնմխելի դրամագլխի համար 55 —
- 6) Վարչութեանս 1000 ր. պարտքի երկրորդ 1¹/₅-ի վճարը 200 —
- 7) Դիւանական եւ այլ մանր ծախսեր 77—06
- 8) 1893 թ. 4¹/₂ տոկոսաբեր ներք. փոխ. տասն տոմսերի արժէքը 1038—03
- 9) Մնացորդ առ 1-ն յունվ. 1893 թ.
 - ա. Սովեյրոց եւ գաղթակ. դրամա-
զլխից 3329—09
 - բ. Բացուելի գրադարանին նա-
խորդ տարիներից 1231—65
 - գ. Բացուելի գրադարանի դրա-

մի և ընթացիկ փողերի 0/0-ը. 66—43
 Նախահաշուով գրադարանին
 յաջ. զճոյս յատկացրած 100 —
 և. Վարչ. նախահաշուի մնացորդը 66—88 4794—05
 Գումար . . . 12148—40

ԿՈՎԿ. ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՏԵՂ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ. 1894 թ.

ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ:

1894 թ. սկզբներից քաղաքիս և նահանգի մէջ օրա-
 լուր սկսաւ բազմանալ Տաճկահայաստանից գաղթական հա-
 յերի թիւը: Այդ թշուառները, վայրենի քուրդի բարբարո-
 սութիւնից իւրեանց կեանքը և պատիւը ազատելու համար,
 թողնելով հայրենի հողը, աւունը, տեղը և բոլոր գոյքը, գաղ-
 թեցին մեր երկիրը, հանգիստ կեանք վարելու համար: Բայց
 ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել նոցա բաղդը: Նոքա
 ազատուելով բարբարոս քուրդի արիւնաթաթախ ճիրաննե-
 րից, մեր երկրում ընկան քաղցածութեան և սովի գիրկը:
 Մի կողմից խստաշունչ ձմեռը, միւս կողմից սովը և մերկու-
 թիւնը այդ խղճուկներին հասցրին յետին աստիճանի դրու-
 թեան և աղքատութեան, այնպէս որ գիւղերում և քաղա-
 քում ամեն դռան առաջ կարելի էր տեսնել նոցանից տաս-
 նեակ անձնաւորութեանց ողորմութիւն և օգնութիւն խնդ-
 րելիս: Ահա այդպիսի հանգամանքի մէջ հարկաւոր էր, որ
 տեղիս ճիւղի Վարչութիւնը իւր օգնութեան ձեռքը կար-
 կառէր այդ թշուառներին: Նայելով իւր նախահաշուի ոչըն-
 չութեանը, անզօր էր նա այդ անելու: Այդ նպատակի հա-
 մար նա միայն 400 ր. ունէր, որ կարիքի մեծութեան հա-

մար դա մի զէրօ էր: Բայց Վարչութիւնս չը յուսահատեցաւ այդ ճգնաժամում: Նա իւր յոյսը դրեց հայի պատմական ողորմածութեան վրայ և սկսեց օգնութեան գործը՝ քաղաքումս բանալով ձրի ճաշարան, իսկ գիւղերում ալիւր, ցորեն և գարի բաժանելով: Զը սխալուեցաւ Վարչութիւնս իւր հաշուի մեջ—սկսելով իւր գործունէութիւնը, այնպիսի համակրանք վայելեց, որ ոչ միայն տեղիս քաղաքացիներին, այլ և ամեն կողմերից առատ նուէրներ սկսան թափել Վարչութեանս գանձարանը:

Քիչ չ'օգնեց գործի յաջողութեանը և մամուլը: Կովկասի հայ և օտարազգի պարբերական մամուլը հրաւեր կարգաց ազգաբնակչութեանը, օգնութիւն հասնելու այդ թըշուառներին: Վարչութեանս յոյսերն այնպէս յաջող պսակուեցին, որ նա այդ խեղճուկները կարիքների համար 5343 ր. 11 կ. ծախսելուց և իւր նախահաշիւն լրացնելուց յետ, առ 1-ն յունուարի 1895 թ. խնայողութիւն ունեցաւ 3329 ր. 09 կ. նուիրատուութեանց գումարից և 66 ր. 88 կ. իւր տարեկան նախահաշուից: Ուստի Վարչութիւնս իւր սեպուհ պարտականութիւնն է համարում բերել իւր խորին շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին, պարբերական մամուլի զեկավարներին, պաշտօնական հիմնարկութեանց և այն ամեն անձնաւորութեանց, որոնք իւրեանց աջակցութեամբ նպաստեցին Վարչութեանս գործի յաջողութեանը:

Մ Ո Ւ Տ Ք Ի Բ Ս Յ Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ե Ն

I. Տարեկան անդամավճար ստացուել է 440 ր.
 Վարչութեանս նախահաշուով նշանակուած էր ունենալ 100 անգամ: Բայց այդ թիւը Վարչութիւնս ինչ ինչ պատճառներով անկարող եղաւ լրացնել, ուրեմն սպասուածից պակաս ստացուեց 60 ր.

II. Նուէրներ սովելոց և զաղթականաց համար. . . 8672 ր. 20 կ.
 Նախահաշուի մէջ այգպիսի վերտառութեամբ նուէրներ չը կար և չէր սպասուում: Բայց ինչպէս չիշեցինք այդ ստեղծեցին հանգամանքներն. ամեն կողմից Վարչութեանս օգնութեան հասան և ինչպէս տեսանք մի պատկառելի գումար կազմուեցաւ: Նուէրներ այդ նպատակի համար կազմուել են հետեւեալ կերպիւ:

- 1) Վեհափառ Վաթուղիկոսից Հոգևոր կառավարութեան ձեռքով 3000 ր. — կ.
- 2) «Մշակ» լրագրի խմբագրութիւնից 2400 » — »
- 3) Խորհրդից 1150 » — »
- 4) Տիկ. Տէրեան-Ղորղանեանի կոնցէրտի արգիւնքը 667 » 20 »
- 5) Կարսի գաւառապետ պ. Շաղուբաթեանի և արժ. Նահապետ վարդապետի ձեռամբ հաւաքած 1098 » — »
- 6) „Русск. Вѣдомости“, „Тифл. Листокъ“ խմբագրութիւններից և այլ մասնաւոր անձերից 226 » 90 »
- 7) Ձրի ճաշարանին նիւթերով տեղիս մի քանի վաճառականներից 130 » 10 »

Գումար. 8672 ր. 20 կ.

III. Մասնաւոր նուէրներ ստացուել են 510 ր.
 Վարչութիւնս իւր նախահաշուով նուէրներից սպասուած էր մուտք 300 ր. Բայց քաղաքիս պատուելի հասարակութիւնը ակնյայտնի տեսնելով Վարչութեանս գործունէութիւնը, քաջալերեց նրան իւր առատ նուիրատուութեամբ: 510 ր. նուէրներից 200 ր. ստացուել է զանազան առիթներով. իսկ 310 ր. ստացուել է տօնախմբութեանց առթիւ այսպէս:

Մեղքոն, Գասպար և Բաղդասարի տոնին	4 մարդուց	15	ր.
Ս. Նուենէի տոնին	1	»	5
Ս. Յովհաննու Մկրտչի տոնին	9	»	31
Ս. Պարսամի տոնին	1	»	3
Ս. Աբիսողոմի	1	»	3
Ս. Սարգսի	10	»	39
Ս. Սիմէօնի	7	»	19
Ս. Վարդանանց տոնին	10	»	33
Ս. Սօֆիայի տոնին	1	»	5
Քառասուն մանկանց տոնին	3	»	13
Ս. Գրիգոր Լուսաւորչի	5	»	14
Աւետեաց տոնին	1	»	3
Ս. Յարութեան տոնին	4	»	16
Աղէքսանդրի	8	»	38
Գաբրիէլ-Միքայէլի տոնին	2	»	8
Ս. Յակովբայ տոնին	4	»	15
Դաւիթ մարգարէի տոնին	1	»	5
Պօղոս և Պետրոսի	7	»	45

Գումար . . . 310 ր.

IV. Այլ եւ այլք . . . 2526 ր. 20 կ.

1) Թատերական ներկայացումից արդիւնք 113 » 47 »

Այդ բաժնից Վարչութիւնս իւր նախահաշուով սպասում էր ստանալ 300 ր. մուտք. բայց այդ չը յաջողուեցաւ նրան նախ այն պատճառաւ, որ այդ ժամանակամիջոցում թէ ուսումնարանի և թէ այլ բարեգործական նպատակներով յաճախակի ներկայացումներ եղան, որոնք նիւթակաշապէս ծանրանում են հասարակութեան մի մասի վրայ, որ իւր նախահաշուի այս կամ այն մասի մէջ աւելի մուտք ունենալով կարող կը լինի լրացնել իւր ծրագիրը, չը ցանկացաւ իւր կողմից ծանրաբեռնել, առանց այն էլ ծանրաբեռնուած հասարակութիւնը:

2) Երկու եկեղեցիներում ունեցած զանձանակների արդիւնքը . . . 113 ր. 66 կ.

3) Գրադարան - ընթերցարանին յատկացրած գումար.

1. Նախորդ տարիներից գոյացած . . 923 ր. 79 կ.

2. 1893 թ. վերջին նախահաշուի մնացորդը . . . 307 » 86 »

3. Գրադարանի յատուկ գումարի և Վարչութեանս ընթացիկ գումարի խնայող. զանձ. շահեցրած փողի տոկոսիքը . . . 66 » 43 »

4. Վարչութեանս Զ-րդ նիստի վճռի համաձայն գնուած ներքին փոխառութ. 1893 թ. 4¹/₂ 0/0-աբեր ՁՁ 023404—023413 տասն տուճսերի պետական արժէքը . . . 1000 ր. — կ.

Գումար . . 12148 ր. 40 կ.

Այսպիսով Վարչութիւնս 1894 թ. մուտք է ունեցել 12148 ր. 40 կոպէկ:

Ե Լ Ք Ի Բ Ա Յ Ա Տ Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

1) Վարչութիւնս իւր նախահաշուի ելքի բաժնի առաջին կէտի հիման վրայ օժանդակել է Կարսի Հայոց երկսեռ ուսումնարաններին 400 ր.

2) Զքաւոր ուսանողներին նպաստ է տուել 176 ր. 55 կ. Վարչութիւնս 1894 թ. նշանակած էր այդ նպատակի համար միայն 100 ր. բայց վարչութիւնս ծախսել է որոշուած գումարից 76 ր. 55 կ. աւելի: Նախահաշուի 100 րուբլով վարչութիւնս պարտաւոր էր տեղիս հայոց երկսեռ ու-

սու մնարանաց և ուսաց օրիորդաց Մարիանեան հայ աղքատ սանուհիներին հազուստ մատակարարել. բայց որովհետև Մարիանեան դպրոցում հաշուետու տարուաց ընթացքում կարիք ունեցող օրիորդ չը կար, ուստի վերոյիշեալ 100 բուբուլաց 96 բ. 55 կ. ծախսեց տեղիս հայոց ուսումնարանների 10 աշակերտի և այդքան էլ աշակերտուհու համար շորեր կարելու:

